

# ՆԻՒԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԶՆԱԴԱՐԵԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԳԻՏՈՒԹԵԱՆ

---

Անյիշատակ ժամանակներից, հայկական լեռնաշխարհում բնակուող հնդեւրոպական ցեղերի, իսկ Ն. Բ. Գրդ հազարամեակի վերջին քառորդից, հնդեւրոպական նախալեզուից հայերէնի ճիւղաւորումից յետոյ<sup>1</sup>, Հայերի երկար ու դժուար ողջ պատմութեանը ուղեկցել են այլազան նուագարաններ՝ նախնադարեան ձայնարձակիչ իրերից, Զարը վանելու կոչուած թակիչներից, բոժոժներից ու նմաններից, մինչեւ հարկանային, փողային ու լարային երաժշտական առաւել կատարելագործուած գործիքները:

Ընդհանրապէս Հայաստանը եղել է ոչ միայն ազգային վառ ինքնատիպ երգարուեստի, այլև գործիքային բարձր զարգացած նուազի երկիր: Հին ու միջնադարեան Հայաստանում, ժողովրդի տարրեր խաւերում մեծ դեր է խաղացել հարկանային, փողային ու լարային նուագարանների այն միակցութիւնը, որի յարատեւ մասը մեր ժամանակներում պայմանականօրէն անուանում է «ժողովրդական գործիքների խումբ»:

Լայնօրէն տարածուած լինելով հայ գիւղական եւ քաղաքային բնակչութեան կեանքում, ազնուականութեան, պաշտամունքի ծառայողների ու զինուորական դասի միջավայրում, կենցաղավարելով մասնագէտ հիանալի վարպետների եւ սիրողների բազմազան շրջանակներում, այդ գործիքները միայնակ (սոլոյ), նուագուրդային (անսամբլային) եւ կամ նուագախմբային (օրկեստրային) կատարմամբ դարեր շարունակ հնչել են՝ խորհրդաւոր ծիսակատարութիւնների եւ ուազմական երթերի առթիւ, աշխատանքային ոգեւորութեան ու հանդիսաւոր թափորների ընթացքում, միապետների պայտանե-

1. Թ. ԳԱՄԿՐԵԼԻԶէ, Վ. ԻՎԱՆՈՎ, Հնդեւրոպական լեզուն եւ հնդեւրոպացիները: Նախալեզուի եւ նախամշակոյթի վերականգնումն ու պատմա-տիպարանական վերլուծութիւնը: Մաս Ա, Թբիլիսի, 1984, էջ XClV, Մաս Բ, Թբիլիսի, 1984, էջ 863, 912 (ռուսերէն):

բում ու հրապարակային ելոյթներում, բնութեան գրկում ու թատերային շքեղ ներկայացումներում եւ, ինչպէս այլուր, նոյնպէս եւ մեր մէջ, թէեւ դանդաղ, բայց հստեռողականօրէն բարեցրուելու:

Նրանք դարձել են հայ ժողովրդի պատմութեան տարբեր զրջան-ների, երգում գիտութեան ու ճարտարարուեստի հնարաւորութիւն-ների, այլև դրացի ժողովուրդների հետ Հայերի մշակած կապերի իւրատեսակ ցուցիչները, մեծապէս նպաստել են հայ երաժշտարուես-տի ծաղկման ու իրենք էլ կատարելագործուել են համապատասխան ցուցընթաց մի քայլով. եւ անցնելով Հայրենախօս Հնագոյն ցեղե-րի յայտնութեան եւ զարգացման<sup>2</sup>, Արմանի<sup>3</sup> եւ Հայաստ-Ազգի<sup>4</sup> ցեղային միութիւնների հաստատման, այլև Վանի թագաւորու-թեան<sup>5</sup> բարգաւաճման ու Կելլինիզմի<sup>6</sup> ծաղկման շրջաններին վերա-

2. Եթէ Նախահայերէնը Հնդեւրոպական մայր լեզուից ճիւղաւորուել է Ն. Ք. Գրդ Հազարամեծակի վերջին քառորդում, ապա ուրեմն պարզ է, որ ճիշտ նրա կողոններն էլ եղել են Հայկական Հնագոյն ցեղերը՝ որոնք յաստնուերով, յետագայ 4-5 հարիւրամետակների ընթացքում աստիճանաբար զօրացել են եւ, ի վերջոյ, կանգնել ցեղային միութիւնների ստեղծման հեռանկարային ուղու վրայ:
  3. Արմանի երկրի (որ եւ ամենայն հաւանականութեամբ՝ ցեղային միութեան) մասին յիշատակութիւնն կայ Նարամսուէնի արձանագրութիւններում (Աքբաղի թագաւոր Ն. Ք. լուրջ 223թից): Հմտ. G. BARTON, *The Royal Inscriptions of Sumer and Akkad*, London, 1929. K. RIEMSCHNEIDER, *Lehrbuch des akkadiischen*, Leipzig, 1961, s. 169. Երկու ազդեկիններն էլ օգտագործուած-մեկնարանուած են Հայափսական գրականութեան մէջ: Տե՛ս ԽԵՆԱՍՆԵԱՆ Ռ., Համեմատական լեզուառանութեան նոր յայտնագրութեանները եւ Հայերի ծագման ու հմագոյն պատմութեան հարցերը, «Բաներ Երեւանի Համալսարանի», 1979, թիւ 2, էջ 102:
  4. Գ. ՂԱՓԱՆՑԵՑ, Հայաստան Հայերի բնօրբան, (Հայերի ծագումը եւ նրանց սկզբանական պատմութիւնը), Երեւան, 1947 (ռուսերէն):
  5. Հնագիտական պեղումներից յայտնաբերուած իրեր (յատկապէս՝ Ն. Ք. Դրդ զարին վերաբերող մի զոյժ բրոնզէ ծնձանալը Կարմիր բլուրից), ազգագույն տուեալներ, պատմական փաստեր եւ այլն ցոյց են տալիս, որ ասուլաս-բարեկաման հարուստ մշակոյթից հետ մի քանի հարիւր տարի սերու կասերի մէկ գնուած Վանի թագաւորութեան մէջ (այսպէս կոչուած «Ուլրատուի») երաժշտութիւնը եւ դրա հետ մէկտեղ գործիքային նուագի արուեստը իր ժամանակի համաշխարհային քաղաքակրթութեան չափանիշներով առաջաւոր բնագծեր էր նուածել: Ն. ԹԱՀ-ՄԻԶՁԵԱՆ, Երածշութեան տեսութիւնը հիմ Հայաստանում, Երեւան, 1977 (ռուսերէն):
  6. Հելենիզմի շրջանը Հայաստանում մեծ նշանակութիւն ունեցաւ նաև այստեղ կիրառուող նուագարանների յետապայ կատարելագործման տեսակէտով՝ արեւելեան եւ արեւետեան կենսական տարրերի միաձաւման պայմաններում Հայկական ազգային հողի վրայ: Հայաստանում այդ շրջանում կիրառուած նուագարանների մասին մեր գիտաները փոքր-ինչ աւելի որոշակի է: Տե՛ս մեր կենկուում-ոյուած՝ Հիմ Հայաստանի հելենիստական մշակոյթի մասին տուեալների ընթական ամփոփում, հետեւան կրտարակութեան մէջ: Անտիկ աշխարհի պատմութեան եւ մշակոյթի հարցերը (Անտիկ թշամի՝ սոցիալիստական երկրների մասնագէտների Միջազգային Կոմֆերանսի («Եյրէմէ») գելուցումները), Երեւան, 1979, էջ 165 (ռուսերէն):

բերող նախաքրիստոնէական կարեւորագոյն փուլերից, թ. Ք. 12-13րդ դարերում, հայկական աւատատիրական ողջքաղաքակրթութեան հետ բարձրացել իրենց զարգացման գագաթնակէտին<sup>7</sup>, կենտրոնական Հայաստանում եւ Կիլիկիայում:

Դա՝ միաձայնային արուեստին կապուած նուագական երաժշտութեան անհամեմատելի ծաղկման պատմաշըանն է՝ միջնադարի քաղաքակիրթ ողջ աշխարհում: Դրանից յետոյ նուագական երաժշտութեան յետագայ եւ աւելի լարուած առաջընթացն անխուսափելիօրէն առընչուելու էր բազմաձայնային մասնագիտացուած նոր արուեստի ծագման ու հնարաւորութիւններով լեցուն զարգացմանը, որ տեղի ունեցաւ Արեւմուտքում: Արգեստականորէն կտրուելով քրիստոնէական եւրոպական խոշոր կենտրոններից, հայկական իրականութիւնը, ողջ Արեւելքի եւ, մասնաւորապէս, արդէն գրեթէ ամբողջապէս մահմեղականացած Մերձաւոր Արեւելքի հետ, հեռու մնաց առաջաւոր վերափոխիչ շարժումներից: Ստեղծուած պայմաններում, մանաւանդ իկոնիայի սուլթանութեան եւ դրան յաջորդած Օսմանեան կայսրութեան մէջ, հայկական մասնագիտացուած գուսանական նուագական երաժշտութիւնը երկար ժամանակ կենցաղավարել է որպէս աստիճանաբար իւրացուող հազուագիւտ արժէքների շտեմարան<sup>8</sup>: Ի վերջոյ,

7. Ինչպէս իրաւացիօրէն հետեւցնում է պրոֆ. Քր. Քուչնարեանը՝ դատելով զարգացած աւատատիրութեան շրջանի հայկական երգարուեստի կոթողների ելեւչային բարզ կառուցուածքից, նոյն շրջանում մեր մէջ կենցաղավարած նուագարաններից առաւել կատարիցներու իրենց տեքնիկական հնարաւորութիւններով շատ մօտիկ կարելի է համարել Հայաստանում այսօր եւս գործառուղ թառին, ուգին, քանոնին եւ սանթուրին: Քր. ՔՈՒՇՆԱՐԵԱՆ, Հայկական միամայնային երաժշտութեան պատմութեան եւ տիստեան հարցերը, Ենինգրադ, 1958, էջ 215 (ռուս.):
  8. Դրա համար հիմքեր էին ստեղծուել 11րդ դարի կէսերից, սեղուկեան արշաւանքներից յետոյ, երբ ընկերային-տնաեսական շած մակարդակի վրայ գանուող, բայց թուաքանակով շատ եւ ոպամականորէն կազմակերպուած թուրքմէն քոչւր ցեղերը, այլ երկրների կարգին նուաճելով նաև պատմական Հայաստանը, մշտական բնակութիւն հաստատեցին այստեղ, եւ Հարիւրաւոր տարիներ ապրելով հայերի հետ մօտիկ Հարեւանութեամբ, ընկացեցին նրանց աւելի բարձր մշակոյթի մի ամբողջ շարք տարրեր, այդ թւում եւ երգ-պարային արժէքները: Ինչպէս ցոյց են տալիս լեզուարանական ուսումնասիրութիւնները, արդի թուրքերէնում հայերէնից փոխառեալ 223 բառեր կան, որոնցից 25ը պարատեսակների ու դրանց կապուած երգերի անուններ են, ներառեալ պար խօսքը եւս, այսպէս. պար-բար, հորան-հորան/հորոն, վարդաղո-վարդիւր, ոչ շորորա-գենք շորորա, հոյ նար-օյնար, գոյվենք-գյովենք, գոյթանապար-քօթանապար, ծափիկ-չափիք/չեփիք, տասնը-չորս-դասնիշորս, վարձակ-վարսաղը, նաեւ Գյումրի պար, Համշէնի հորան, հին Համշէն-էսքի Համշէն, Տիւրիկ, Մարո, Թելլ եւ այլն: Տե՛ս Խ. ԱՍԻՒԹԵԱՆ, Հայերէնից փոխառեալ բառերը արդի թուրքերէնում, Մերձաւոր եւ Սիջիմ Արեւելիք երկրներ եւ ժողովուրդներ, 12, Թուրքիա, երեան, 1985, էջ 143-164:
- Կասկածից գուսր է, որ հայերից փոխառուած արժէքների թւում եղել են նաև այլազան նուագարաններ, որոնք առհասարակ աւելի անարգել են անց-

սակացն, հայկական նուագական երաժշտութիւնը ուշ միջնադարի ծանր պայմաններում, ինքը եւս որոշ կուտակումներ կատարեց: Հայ իրականութեան մէջ վերջին անգամ հանրագումարուեցին պարսկական, արաբական, այլեւ օսմանեան նուագական երաժշտութեան հետ փոխադարձաբար կապուած հայ-արեւելեան աւանդութիւները: Հայ կատարող երաժիշտների ձեռքերում իւրովի հնչող դասական նուագարաններ են դառնում հայ-պարսկական թառը, հայ-արաբական ուղին ու հայ-թուրքական թամբուրը:

Հին տիպի գուսանների նուագումից յետոյ, երբ, ի տարբերութիւն կենտրոնական Հայաստանում ծայր առած մզձաւանջային ժամանակների, գտղթավայրերի եւ, մասնաւորապէս, Սպահանի (Նոր Ջուղայի), Կ. Պոլսի եւ Թիֆլիսի հայկական գաղութների փոքր իշտէ տանելի պայմաններում ձեւաւորում են հայ մասնագէտ աշուղի ու վերջինիս շատ մօտիկ՝ նոր տիպի քաղաքային երգիչ-նուագածուի՝ սազանզարի կերպարները, վերանորոգութեան երկու (17-18րդ) դարերի ընթացքում հայկական նուագական երաժշտութիւնը եւս գուրս գալով յարաբերական վերընթացի ճամբան, ըստ էութեան նախապատրաստուած զիմաւորեց ազգային մեծ զարթօնքի բազմախորհուրդ շրջանը՝ 19րդ դարը: Կ. Պոլսում եւ Թիֆլիսում, Բաքում եւ Սպահանում հանդէս եկաւ հայ կատարող (նուազածու) մէծատաղանդ երաժշտների մի փաղանդ, որի համբաւը տարածուեց Մերձաւոր Արեւելքում եւ նրա սահմաններից գուրս, եւ որի ներկայացուցիչներից շատերն աչքի ընկան ոչ միայն որպէս արեւելեան դասական արուեստի, այլ եւ սեփական ժողովրդի հոգեւոր ու աշխարհիկ (քաղաքային) երաժշտութեան քաջահմուտ վարպետներ<sup>9</sup>:

Նում մի ժողովրդից միւսին: Սակայն, թուրքական երաժշտական գործիքներին անդրադարձ եւրոպացի հեղինակներն անգամ (հաւանական անապորժութիւնների<sup>9</sup> խուսափելու համար, թէ այլ պատճառով), ըսդհանրապէս լրջօրէն չեն զրալում այն հարցով, թէ թուրքիայի այժմեան տարածքում մինչեւ Ալաջին աշխարհամարտը դարեր շարունակ ապրած հայկական հոծ զանգուածները ինչպիսի հետքեր են թողել իրենց երգ-երաժշտութեամբ, պարերով ու նուագարաններով: Հմմտ. H. FARMER, *Turkish Instruments of Music in the Seventeenth Century*, Glasgow, 1937. L. PICKEN, *Folk Musical Instruments of Turkey*, London, 1975.

9. Դեռևս վերանորոգութեան շրջանից, բայց աւելի՝ ողջ 19րդ դարի ընթացքում, այդ երաժշտների գործունելութեան մէջ, հայկական միաձայնային արուեստի պայմաններում գուցէ առաջին անգամ, երեւելի ընդգծումներով դրսեւորուեց գործիքային-նուագական երաժշտական մտածողութիւնը: Մերձաւոր Արեւելքի երկրներում շատ աւելի փայլեցին հայ «սազենդէչ»ները (նուազածուները), ի տարբերութիւն «հանենդէչ»ների (երգիչների): Եւ սա բացարւում է ոչ միայն նրանով, որ հայ երգչի գրական-երաժշտական առողանութիւնը այնքան էլ օրգանական չէր ստացում՝ արաբերէն, պարսկէն, օսմաներէն, աղբյուղաներէն երգելիս (այստեղից՝ աղբյուղաներէն առածը, «հայ երգովի լեզուն կտրես, իսլամ



Սաղմոսարան 1599 թուի, Թըվանն գիւղ, Կարին:  
(Զեռ. Երեւան, թիւ 2660, թղ. 140թ):

Աստիճանաբար մօտենալով բուն հայաշխարհին, եւ ոչ հազուադէպ նաեւ ուղղակի տեղափոխուելով Հայաստան, այդ երաժշտները հայրենիքում եւս նոր կեանք Հաղորդեցին հնուց ի վեր ժողովրդական եւ ժողովրդային-մասնագիտացուած արուեստների շրջանակներում կիրառուող նուագարաններին:

Ի դէպ, դրանցից ամենատիպականները մինչեւ այսօր էլ գոյատեւում են, եւ դրանց տիրապետող վարպետները շարունակում են զարգացնել երգին ընկերակցելու, զանազան տեսակի նուագուրդներով ու նուագախմբային լրիւ կազմով ելոյթներ ունենալու վաղնջական աւանդոյթները<sup>10</sup>:

Միաժամանակ, վերանորոգութեան յիշեալ շրջանի երկրորդ կէսից եւ, գլխաւորապէս, 19րդ դարի ազգային նոյն զարթների շրջանից, Հայերը՝ առաջիններից մէկը արեւելեան ժողովուրդների մէջ՝ գիտակցական մղումով հաղորդուելով եւրոպական մշակոյթին (երբ դրա համար ընկերային-տնտեսական փոքր ի շատէ նպաստաւոր պայմաններ էին ստեղծում), արագարար սկսեցին տիրապետել արեւմըտեան կատարելագործուած նուագարաններին եւ իւրացնել համերգային կեանքի արդի ձեւերը:

Յայտնուեցին Եւրոպայում կրթուած հայ տաղանդաւոր դաշնակարաններ, ջութակահարներ, նաեւ ոչ մեծ արդի նուագախմբեր, դարձեալ, նախ հայարանակ օտար քաղաքներում, ապա եւ Հայաստանի տարածքում: Հայ իրականութեան մէջ ընտանի երեւոյթներ դարձան դաշնամուրն ու ջութակը, աղեղնաւոր միւս գործիքներն ու փողային նուագարանները, յետոյ՝ երգեհոնը (սկզբում մասնաւորապէս կաթողիկէ համայնքում): Այնքան, որ նոյնիսկ աշուղներից ոմանք

նուագածուի ձեռքը կտրես: Տե՛ս ՀՌ. ԱշԱԽՈՅԱՆ, Հայերէն արմատական քառարան, ւու. 4, Երևան, 1979, էջ 630): Մինչեւ նուագը ազատ էր այդպիսի կաշկանդումներից, եւ զեռ հնարաւորութիւն էր ընձեռում, յանկարծարանութեան արուեստի շնորհիւ ազգային եւ անհատական վառ շնչարելով յագեցնել անգամ մողաները (լինեն դրանք պարսկական, արական թէ օսմանեան): Խսկ հայկական մասնագիտացուած երգաստեղծութիւնը իր վերընթացի հնարաւորութիւններն սպառէլ էր զեռեւս 15րդ դարի կէսերին:

10. Հայաստանում Խորհրդային կարգերի հասաստումից յետոյ որոշ պայմաններ ստեղծեցին ազգային մշակոյթի հնարաւոր այդ բնագաւառը պետական ուշադրութեան արժանացներու առումով: Զի կարելի ասել, որ բաւարար շափով օգտուել ենք այդ պայմաններից: Եւ սակայն, անկասկած է, որ մեր մէջ եւս 20-30ական թուականներին նոր կեանք, արժէք ու նշանակութիւն ստացան հին նուագարանները, դրանց վերակառուցմանն ու կատարելագործմանը վերաբերող աշխատանքները, այդ նուագարաններին տիրապետող երաժշտները, իրանց միաւորելու ձգտումը, երկացանկը հարստացնելու ինդիքները եւ այլն: Աւելի ուշ՝ սկզբանական շրջանի ոգենորութիւնը թէեւ յայտնապէս նուագեց, բայց վերջերս դարձեալ զգալի է դասում եւ յոյսեր է ներշնչում վաղուց սկսուած գործը շարունակելու եւ նոյնիսկ այն ընդլայնելու, խորացնելու գովելի միտումը:

(ինչպէս օրինակ՝ Ձիւանին) սկսեցին կիրառել եւրոպական ջութակը, Արեւմտեան Հայաստանի աշուղական-սազանդարական խմբերում՝ հարմոնիկը (ձեռնադաշնակ), իսկ կլարնետն անցաւ անգամ քաղաքային ժողովրդական երաժշտութեան կատարողների ձեռքը<sup>11</sup>:

Նուագարանների եւ նուագական երաժշտութեան զարգացման ազգային զարաւոր պատմութիւնն ու հարուստ փորձը ենթադրում են նաեւ համապատասխան գրականութիւն այդ մասին, որը, սակայն, չունենք տակաւին: Ընդհանրապէս հայագիտութեան մէջ անտեսուած չեն եղել Հայաստանում եւ գաղթավայրերում կենցաղավարած նուագարանների ու նուագական երաժշտութեան հետազոտութեանը կապուած հարցերը: Հայ հին միջնադարեան մշակոյթի ամենատարբեր երեսակների յարգն իմացող այնպիսի գիտնականներ, ինչպիսիք էին Ղ. Ինճիճեանը, Ղ. Ալիշանը, Վ. Հացունին եւ որդիչներ, իրենց աշխատութիւններում նաեւ ազգային երաժշտական գործիքագիտութեան առումով շատ արժէքաւոր տեղեկութիւններ են արձանագրել, ըստ տեղին<sup>12</sup>: Աւելին, մօտիկ անցեալում եւ մեր օրերում հայկական մամուկի էջներում որպէս առանձին աշխատութիւնների ամբողջական հատուածներ եւ կամ ինքնուրոյն յօդուածներ երեւացել են, նոյնիսկ բաւական ծաւալուն գրութիւններ, շարադրուած, դարձեալ, ոչ մասնագիտ երաժիշտների կողմից<sup>13</sup>:

11. Այս գերին տիպի ու նման փաստերը աչքի զարնող երեւյթներ են նուագարանների ծագման, զարգացման ու տարածման պատմութեան մէջ եւ պատահական չէ՝ որ գրանք բնակչէն անտեսուել, ասենք, թուրքական երաժշտական գործիքների հարցով զրադաւած հեղինակների կողմից: Հմտւ. Պիկենի վերոյիշեալ աշխատութիւնը եւ՝ KURT et URSULA REINHARD, *Turquie: Les traditions musicales* (Collection de l'Institut International d'Etudes Comparatives de la Musique), Version abrégée du texte original: «Die Musik der Türkei», Ed. Buchet/Chastel, 1969, p. 115-129 (Les instruments populaires).

12. Տե՛ս, ասենք՝ Ղ. Ինչիճեան, Ցախօսուրիմ, Հո. Բ., Վենետիկ, 1835, էջ 253, Ղ. Ալիշան, Ցուշիկ հայրենաց Հայոց, Հո. Բ., Վենետիկ, 1921, էջ 118, Վ. ՀԱՅԻՌԻՆԻ, Ճաշեր եւ իննոյց իին Հայաստանի մէջ, Վենետիկ, 1912, էջ 204 եւ այլն:

13. Տե՛ս Գ. Լիննեան, Երկեր, Երեւան, 1963, էջ 200 (Աշուական եղանակներն ու երաժշտական գործիքները): Ա. ԵՐԵՄԵԱՆ, Նոր-Զուլա, 1919, էջ 90 (Դորժական երաժշտութիւնը Զուղահայերի մէջ): Լ. ԽԱՆԶԱՒՐԵԱՆ, Հայկական իին երաժշտական գործիքները, Աշխատութիւններ Հայաստանի պետական թանգարանի, Հո. 5, Երեւան, 1959, էջ 63: Տեղն է յիշատակելու նաեւ Ս. Լիսիցեանին, որ անհրաժեշտ համարեց (եւ իրաւացիորէն) հայկական (կամ Հայոց մէջ կենցաղագրած) հին նուագարանների մասին եղած տեղեկութիւններն էլ ի մի հասքել, պարարուեստի հարցերը լուսաբանող իր հետազոտական աշխատութիւններում ինչպէս եւ Ա. Գէրգեանին, որ հայկական մանրանկարներում հանդիպող եւ արհեստներին ու կենցաղին գերաբերող նիւթերը դասակարգելիս, առանձին շարքով ներկայացրեց նուագարանների պատկերները եւս: Տե՛ս Ս. ԼիՍԻՑԵԱՆ, Հայ ժողովրդի իինաւուրց պարերն ու բատերական ներկայացումները, Հո. Ա, Երե-

Հայ երաժիշտներից առաջինը կոմիտասն էր, որ նուագարանների եւ ազգային նուագական երաժշտութեան նկատմամբ գիտական ամենալուրջ հետաքրքրութիւն ցուցաբերեց, սեղմ գծերով շարադրեց իր հայեացքներն այդ մասին եւ հայկական հովուական սրինգի վերաբերեալ թուղեց մինչեւ այժմ էլ չգերազանցուած մի ուսումնասիրութիւն<sup>14</sup>: Աւելի ուշ, հայ երաժշտութեան պատմութեան ու տեսութեան այլազան հարցերին նուիրուած իրենց աշխատութիւններում, ըստ անհամար շտութեան անդրադառնալով նուագարաններին եւ հայկական նուագական երաժշտութեանը, արժէքաւոր դիտողութիւններ են արել Ա. Հիսարլեանը, Սպ. Մելիքեանը, Յ. Թովհաննիսեանը եւ աւելի՝ Ա. Շահվերդեանն ու Քր. Քուչնարեանը<sup>15</sup>:

Վերջապէս յետպատերազմեան տարիներուն մեր մէջ թեկնածուական քննաճառեր եւս նուիրուեցին Հայաստանում կենցաղավարող միջնադարեան<sup>16</sup> եւ արդի նուագարաններին ու կատարող երաժիշտներին (մասնաւորապէս՝ ջութակահարներին)<sup>17</sup>: Այս բոլորով հանդերձ, մեր ժամանակների հայկական երաժշտական գործիքագիտութիւնը, որպէս ազգային պատմական երաժշտազիտութեան մի բաժինը, խոշոր պարտքեր ունի հայագիտութեան առջեւ եւ առհասարակ

ան, 1958, էջ 139-156 (ռուսերէն): Ա. Գևորգիսան, Արիեստմերն ու կենցաղը հայկական մամրանկարներում, Երեւան, 1978, տախ. XLIII-XLVIII:

14. ԿՈՄԻՑԱՍ, Հայ գեղորակ երաժշտութիւն, Փարիզ, 1938 (տե՛ս «Նուագական երաժշտութիւն»):
15. ՏԵ՛Ս Ա. ՀիՍԱՐԼԵԱՆ, Պատմութիւն հայ ճայնագրութեան եւ կենացգրութիւնք երաժիշտ ազգայնոց, Կ. Պոլիս, 1914, էջ 46-51 եւ այլուր: Ս. ՄԵԼԻՔԻՑԱՆ, Ուրուագիծ հայ երաժշտութեան պատմութիւն, Երեւան, 1935, էջ 12-13 եւ այլուր: Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԻՍԱՆ, Հայոց երաժշտութեան պատմութիւն, Երեւան, 1939, ձեռ.՝ Ե. Զարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարան, էջ 82 եւ այլուր: Ա. ՇԱՀՎԵՐԴԵԱՆ, Հայ երաժշտութեան պատմութիւն ակմարկեր, 19-20 դր. Երեւան, 1959, էջ 115-117 եւ այլուր: Ք. ՔՈՒՇՆԱՐԵԱՆ, Հայկական միհանյային երաժշտութեան պատմութիւն եւ տեսութեան հարցերը, Լենինգրադ, 1958, էջ 75-78 (ռուսերէն):
16. Այսպէս, Կարկանային եւ փողային նուագարանների մասին տարիների ընթացքում հաւաքած տուեաները յաջողապէս ամփոփեց կոմպոզիտոր-երաժշտագէտ Ա. Քոչշարեանը: ՏԵ՛Ս Ա. ՔՈՅԱՐԵԱՆ, Հարիմանային եւ փողային ժողովրդական նուագարանները Հայաստանում (Արուեստագիտութեան թեկնածուի գիտական աստիճան հայցերու քննաճանապէտ աստոռնեֆերատը), Երեւան, 1985 (ռուսերէն): Հայկական նուագարանների մասին Ա. Քոչշարեանի աշխատութեան մէջ, ինչպէս եւ ուսու գիտնական Վ. Բեկեայեւի ուսումնասիրութիւններում ամփոփուած գիտանքն է, որ փասորէն արտացոլուած է նաև Սովետական ժողովորդների երաժշտական գործիքների «Ալյասաւմ» (Հրդ Հրատ.) – Սովետական Սիրութեան ժողովուրդների երաժշտական գործիքների Ասլաւա, Մոսկովա, 1975 (ռուսերէն):
17. Հայ ջութակահարների արժէքաւոր առանձին աշխատութիւն է հրատարակել Ա. Ծիցիկեանը. տե՛ս նրա՝ Հայկական աղենային արուեստը, Երեւան, 1977:

չափազանց դանդաղ է բարձրանում դէպի միջազգային արդի նոյն գիտութեան չափանշուած ընդհանուր (եւրոպական միջին) մակարդակը: Աւելի նպատակասլաց զարձնելու եւ գէթ փոքր-ինչ աշխուժացնելու համար դէպի այդ մակարդակը տանող առայժմ կարծես տարերային շարժումը (այլեւ նոյնիսկ որոշ չափով կազմակերպելու համար հասարակական հետաքրքրութիւնը եւս, որը վերջերս, պէտք է ասել, լայնացել է, եւ որը կարող է օգնել գիտական հետաքրքրութիւնների խորացմանը), անհրաժեշտ է հաշուի առնել արդի գիտութեան հիմնարար ձեռքբերումներն ու առանձին բացերը: Յիշաւի, նշանակալի ձեռքբերումներ ունի արդի գործիքագիտութիւնը, նուագարանների հիմնական տիպերի ծագումը, տարածումն ու կատարելագործումը, նրանց կազմուածքը, հնչականութիւնը (acoustique) եւ հնչերանգը, տեսակներն ու տարատեսակները, բնական յատկանիշներն ու արտայայտչական հնարաւորութիւնները, այլեւ տուեալ նըւագարանին կապուած երկացանկի (երաժշտութեան) առանձնայատկութիւնները կարելիութեան սահմաններում լուսաբանելու առումով: Բայց դա արուած է գլխաւորապէս հասարակութեան զարգացման խոցը պատմաշրջաններին, եւ խոշոր քաղաքակրթութիւններին համապատասխան տուեալների քննութեան հիման վրայ<sup>18</sup>:

Նիւթի սակաւութեան պատճառով տեսազաշտից դուրս են մնացել մի շարք երկրներ, այդ թւում եւ Հայաստանը, ողջ հայկական լեռնաշխարհը: Որով մեր խնդիրն է հետեւողականորէն լրացնել այդ բացը եւ, միաժամանակ, մեր սեփական իմացութեան թերին՝ արդի պահանջները՝ բաւարարող գիտական գրականութիւն ստեղծելով հին (ժողովրդական, գուսանական, աշուղական) ու նոր (եւրոպական տիպի) նուագարանների ու դրանց ուսումնասիրութեան գծով<sup>19</sup>, կե-

18. Տե՛ս Զակսի աշխատութիւններից հետեւեալները. K. SACHS, *Die Modernen Musikinstrumente*, Breslau, 1923; *The History of Musical Instruments*, N. Y., 1940. Ասուածք վերաբերում է նաև ամերիկան նորագոյն եռահասոր սբանելի հրատարակութեանը. *The New Grove Dictionary of Musical Instruments*, Ed. by Stanly Sadie, in three volumes, Macmillan Press Limited, London, New York, 1984.

- Հնդեւրոպաբանութեան նորագոյն տուեալների եւ յատկապէս Գամկելիձէի ու Խվանովի վերյիշեալ երկասուրբեակուտ ամփոփուած փաստերի լոյսի տակ վաղ թէ ուշ պէտք է վերանայուի Կուրոտ Զաքսի մտայացքը: Միաժամանակ պէտք է գիտակցել սակայն, որ Հնդեւրոպական մայր ցեղի նախահայրենիքի մասին նոր տուեալները օրակարգի հարց են դարձնում՝ պատմական հայաստանի ողջ տարածում մեծ ընդգրկումով պեղումներ կատարելու անհրաժեշտութիւնը:
19. Հայ երաժշտագիտութեան համար սա եւս հետազոտութեան կարենոր բնագաւառ է: Հին եւ միջին զարեկում նաեւ Հայաստանի ու Կիրկիայի վրայով են իրացուել նուագարանների փոխանցումներն Արեւելքից Արեւմուտք (եւ Հակառակը): Եւ առհասարակ, Մերձաւոր Արեւելքից հետ հայկական լեռնաշխարհի տարածքը եւս ներկայացնում է այն միջավայրերից մէկը, ուր պէտք է որոնել Եւրոպայում կատարելագործուած նուագարանների նախատիպերը:


րառելով թէ՝ նեղ իմաստով գործիքագիտական<sup>20</sup>, եւ թէ աւելի լայն՝ երաժշտագիտական մեթոսները<sup>21</sup>: Առաջնահերթ խնդիրը, սակայն, համապատասխան նիւթերի հայթայթումն է: Առարկայօրէն քիչ են հայկական միջնադարեան երաժշտական գործիքագիտութեան համար պիտանի հիմնական նիւթերը. այն է՝ ներկայումս կենցաղավարող հին տիպի նուագարանները<sup>22</sup>, անցեալից (ասենք 18-19րդ դարերից) պահպանուած (հին վարպետների սարքած) գործիքները<sup>23</sup>, պեղումներից յայտնաբերուած նմոյշները<sup>24</sup>, ի վերջոյ՝ նոր եւ աւելի հին նոտագրութիւններ, գրառումներ, ձայնագրութիւններ<sup>25</sup>:

Հին ու միջին դարերից մեզ չեն հասել նուագարանների մասին պատմական տեսական աշխատութիւններ, դրանց կազմութեան, լարուածքին եւ կիրառութեան կերպերին վերաբերող քիչ թէ շատ ծաւալուն նկարագրութիւններ, առաւել եւս՝ թարբուատուրային որեւէ համակարգի նշանների օգնութեամբ գրառուած նուագական երաժշտու-

20. Նեղ իմաստով գործիքագիտութեան՝ գործիքների կազմութեան ու դրանց բարելըրջութեան մասին գիտութեան (օրգանոլոգիա = organologie) զարգացումը մեզանում անհրաժեշտ պայման է նուագարանների վերաբերեալ քիչ թէ շատ ընդգրկուն հետազոտութիւնների կատարման համար:
21. Հիմնարար աշխատութիւններն սպասելի են երաժշտագիտական մեթոդի լայն կիրառման արդինքներից, մեթոդ, որ ենթարրում է՝ յենուելով գործիքագիտութեան (օրգանոլոգիա = organologie) տուեալների վրայ համակողմանիօրէն ուսումնակիրել նուագարանները՝ որպէս այս կամ այն պատմազնակի երաժշտութեան վերարտադրութեան միջոցներ, լուսաբանել նուագական երաժշտութեան պատմական ու տեսական հարցերը, հետազոտել կատարողական արուեստը եւ վերլուծելով արժեքարուել ստեղծուած ու ստեղծուող երաժշտական կորողները:
22. Դրանք գրեթե բոլորն էլ առկայ են նրեւանի երաժշտական կեանքին կապուած ժողովրդական գործիքների մի քանի նուագանմբերում:
23. Այդպիսիք կարող էին լինել, ասենք, 19րդ դարի հայ մշակոյթի գործիքների անձնական հաւաքածուներում, բայց դրանք, ցաւօք, շաս հացուաէպ երեւոյթ են մեր մէջ: Նշանաւոր է հայկական սրինգների կոմիտասեան ժողովածուն: Այն ունի ճանաչողական կարեւոր նշանակութիւն, չնայած բաղկացած է ընդամէնը 7 գործիքից: Առանձնապէս հարուստ չէ նաեւ Ե. Զարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանում պահուող, ինչպէս եւ Լենինգրադում եւ Սովույայում գործող՝ ՍՍՀՄ ժողովուրդների մշտական ցուցահանդիշների հայկական բաժիններում հաւաքուած նուագարանների միակցութիւնը: Այդ բոլորը միասին առած զաղափար չեն տալիս Սեծ Հայքի, Փոքր Հայքի, Կիլիկիայի եւ այլ տարածքների վրայ դարեր ապրած ու մշակութային բազմապիսի կապեր հաստատած մի ժողովրդի երաժշտական հնաւուցը արուեստի նիւթական (գործիքական) հիմքերի մասին:
24. Դրանց մասին տե՛ս մեր աշխատութիւնը. Նրաժշտութեան տեսութիւնը իին Հայաստանում, Երեւան, 1977, էջ 18-28, 38, 43 (ռուսերէն):
25. Եւ զեր հարցն այն է, որ եղած նիւթն էլ ուսումնասիրուած չէ տակաւին: ՀՍՍՀ ԳԱ-ի Արուեստի ինստիտուտում ժապաւէնի վրայ գրառուած գործիքական եղանակներ կան, նաեւ ձայնասկառառակներ եւ այլն, որոնք վաղուց սպասում են իրենց համբերատար վերծանողին:

**թեան**<sup>28</sup> օրինակներ եւ այլն: Զեռագրերում հանդիպում են նուագարանների մասին տարբեր բնոյթի լոկ փոքր յօղուածներ: Իսկ մատենագիրների աշխատութիւններում՝ աւելի գեղագիտական բովանդակութեան ասոյթներ եւ կամ պարզ յիշատակութիւններ: Այս պայմաններում, բնականաբար, անհրաժեշտ է դառնում աւելի յաճախ դիմել համընդհանուր եւ համեմատական գործիքագիտութեան տուեալներին (մանաւանդ որ, ինչպէս պարզում է, նուագարանների պատմական զարգացման ընթացքը մի քանի էական կողմերով համանման է եղել տարբեր՝ նոյնիսկ իրարից հեռու գտնուած ժողովուրդների կեանքում): Եւ առաւել լայնօրէն ու մասնագիտորէն օգտուել օժանդակ նիւթերից, որոնց շարքում են՝ լեզուագիտութեան ու բառարանագիտութեան, ազգագրութեան ու բանագիտութեան, պատմագրութեան եւ արհեստների<sup>27</sup> ու մշակոյթի պատմութեան, ինքնուրոյն ու թարգմանական (գիտական ու գեղարուեստական) գրականութեան ընձեռած տուեալները, կիրառական արուեստների<sup>28</sup> կենցաղային

26. Угърьснагархъвн ҃жаясаштнагъ мѣвъ ҃чашащ ѡвараптваштпфяжън ҃чашащкарапдѣр ҃յајстнѣкъ ҃чън ҃мѣвъ: ҃Անհրաժѣшън է նշѣл սակայн ҃հետեւեալ: ҃Հայկական միջնաղարեան (եւ ոչ անպայման երգչային) ճեռազբուում, բոլորովին անկախ՝ տուեալ դրական բնագրից, լուսանցքներուու, թող որ հազորադէկ, առաջ են երերուու երաժշտականօրէն դրադէս շարարդուու (ինչպէս ցույց է տալիս ճնոնթիւնը) իհազանների երեմն բաւական երկաս շարքեր, առանց զուգորդելու զըմանք գեղարդուեստական խօսքի հետ: Առայժմ թէաէտեւ դժուար է միհանցնանկ բացատրութիւն տալ երեւելթին, սակայн հիմքեր կան հաստատելու, որ նման իհազարքերը վերաբերութիւն են ունեցել Հայկական միջնաղարեան նուազական երաժշտութեանը: Որպէս օրինակ բերենք դիտարկնուու տիպի մѣвъ յայտնի մի շարք իհազարքերից հետեւեալ հատուածը, Մաշտոցի անուան Մատենաղարանի թիւ 1649 ճեռագրից (թղ. 21-32р):



27. Հայեկան է, օրինակ, միջնադարեան Հայաստանում աղելքրերի արտադրութեան մասին տուեալը, որ քաղաքում է տաշիրի աշխարհագրի արձանագրած տեղեկութիւններից։ Տե՛ս Հ. Փ.Աֆ.ՁԵԱՆ, Անանուն տաշիրի աշխարհագրից Հայաստանի, Աղքարքիչացանի և Արքեւելանի Վրաստանի աշխարհագրութեան և Մտսեսական յարաբերութեանը (10թ դար), «Տեղեկագրութիւնների», 1953, թիւ 5, էջ 77 և 83։

28. Հայաստանի պատմութեան պետական թանգարանում պահուող հայկական ասեղնամդորժութեան նմեյները մեզ հետաքրքրող տեսանկիւնից թէեւ չեն ուսումնասիրուած տակակին, բայց գիտենք որ 17-18րդ դարերի վերաբերող մի քանի կտաւների վրայ պատկերուած են երաժշտական գործիքներ (օրինակ՝ թթ. 1854-55

քանդակների փաստերը<sup>29</sup> եւ, վերջապէս, միջնադարեան մանրանը-կարչութեան այն էջերը, որոնցում պատկերուած են նուագարաններ։ Դրանք ընդհանրապէս ծանօթ են եւ վաղուց է, ինչ հետաքրքրութիւն են առաջացրել, բայց առանց առարկայական կարելիութիւնների յստակ պատկերացման։ Նուագարանների պատկերներով միջնադար-եան մանրանկարները երաժշտական գործիքագիտութեան համար օ-ժանդակ նիւթեր են։ Արդ, ի՞նչ սպասելիքներ կարող ենք ունենալ դրանց ուսումնասիրութիւնից։

Այս կապակցութեամբ նախ նշենք առհասարակ միջնադարից մեզ աւանդուած ձեռագրական ժառանգութեան աշքի զարնող հարստութիւնը<sup>30</sup>, այլեւ այն, որ գրչագրերի մեծագոյն մասը մեզ հասել են 13-14 — 17-18րդ դարերից։ Եւ ճիշտ այդ հարիւրամեակներում է, որ ձեռագրական շատ էջեր զարդարուել են այլազան նուագարանների պատկերներով։ Դրանք ամէնից առաջ ցոյց են տալիս Կիլիկիայում, Կենտրոնական Հայաստանում, գաղութիւններում եւ առհասարակ հայ իրականութեան մէջ կենցաղավարած երաժշտական գործիքների տե-սակների ու ձեւերի բազմազանութիւնը, թէ համաժամանակեայ (syn-chronopique) գոյակցութեան, եւ թէ պատմական յաջորդականութեան առումներով։

Ցիրաւի, աւատատիրական հայ իրականութեան աւանդապահ, դանդաղօրէն բարեցջուող եւ տարրեր վայրերում ամենատարբեր մակարդակների վրայ գտնուող կեանքում՝ աւելի նոր կամ պարզա-պէս կատարելագործուած նուագարանների հետ միասին յարատեւել են նոյնիսկ անյիշատակ ժամանակներից եկող նախնական շատ գոր-ծիքներ եւս։ Իսկ հայ նկարագրողող վարպետները, որպէս մասնա-գէտներ ընդհանրապէս ծանօթ լինելով ասորական, բիւզանդական, նաեւ արեւելիան (պարսկական, արաբական) ու լատինալեզու ձեռա-գրերին, եւ ըստ հարկին օգոտուելով դրանցից, հայկական գրչագրերի գեղազարդման համար տարրեր առարկաներ ընտրելիս, նրանք յամե-նայնէպս, հիմնականում, պատկերել են իրենց անմիջական շրջա-պատում կենցաղավարած իրերը ու, մասնաւորապէս, երաժշտական գործիքները։ Ուստի առաջին եւ կարեւորագոյն տեղեկութիւնը (infor-

- նիւթերը)։ Տե՛ս նաեւ՝ Ս. ԴԱՒԹՅԱՆ, Հայկական ասեղնագործութիւն, Երեւան, 1972։
29. Տե՛ս Գ. ԿԱՐԱԽԱՆԵՍԻՆ, Երաժշտական գործիքները Հայաստանի կենցաղագրական բարձրաքանակներում (ԺԲ-ԺԶ դդ.), Հայկական Արուեստի Միջազգային եր-կրորդ սիմպոզիում, զեկուցումների ժողովածու, Հայ. Գ, Երեւան, 1978, էջ 377-383 (ռուսէրէն)։
30. Իրօք, Հայոց գժուարին ճակատագիրը կրելով մինչեւ օրս պահպանուած ձեռա-գրերը միայն, իրենց քանակով եւ բովանդակութեամբ ենթադրում են պատմական Հայաստանի տարածքը եւ շատ աւելի մեծացիւ (քան այժմ ենք) ժողովուրդ։

mation), որ կարող ենք եւ պէտք է քաղենք մանրանկարների ուսումնասիրութիւնից, դա՝ հայ իրականութեան մէջ նուազարանների անցած պատմական զարգացման ընթացքի պատկերացումն է, ընդհանուր առմամբ<sup>31</sup>:

31. Անկախ ձեռագրերի ստեղծման ժամանակից, նրանցում պատկերուած նուազարանները, տիպարանական առումով, մօսուոր ճշտութեամբ բաժանւում են երեք խմբի, որոնցից երկրորդը ներառնում է նաև առաջինը, իսկ երրորդը՝ առաջինն ու երկրորդը։ Առաջին եւ մեծագոյն խումբը վերաբերում է նախապատմական եւ հին (նախաքրիստոնէական) Հայատանին։ մասցած երկուսը՝ համապատասխանաբար՝ վաղ միջնադարին եւ զարգացած աւատափրութեան շրջանին (ուշ միջնադարում նուազարանների սկզբունքորէն նոր տեսակներ հանդէս չեն եկիլ)։ Այսպէս, նախապատմական եւ հին (հեթանոս) Հայատանին վերաբերող նուազարանների պատկերներից են, օրինակ, փայտեայ կաստանենները (Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թ. 7639, էջ 28թ, թ. 7651, էջ 43ա). մետաղեայ ծնծաղաները (ձեռ. թ. 4776, էջ 6ա). միակողմանի եւ երկողմանի ռազմական միքուները (ձեռ. թ. 5472, էջ 80). ռազմական երկար չեփորները (նոյն տեղում, էջ 144, եւ ձեռ. թ. 189, էջ 595ա). ռազմական կարծ պղնձեայ փողը (ձեռ. թ. 3387, էջ 112թ). դպին ու գուլլ (ձեռ. թ. 9599, էջ 198, թ. 6670, էջ 165ա). եղէճնեայ հսկայական աւազափողը (ձեռ. թ. 6325, էջ 15թ). եղէճբափողերի այլազան տեսակները (ձեռ. թ. 8688, էջ 10թ, 34թ, էջ 546թ, 206, էջ 496թ, 349, էջ 89թ, 189, էջ 13թ եւ թ. 7651, էջ 70թ). Հովուական սրինգը (ձեռ. թ. 5511, էջ 161թ, թ. 2870, էջ 3թ, թ. 7782, էջ 1թ) եւ շուին, թէեւ անյաջող նկարուած (ձեռ. թ. 5783, էջ 4ա). կոնաճեւ՝ առանց լեզուակի ու լեզուակային փոխերն ու պրափողերը (ձեռ. թ. 3387, էջ 53ա, թ. 9599, էջ 133, 6670, էջ 130թ, 138թ եւ 164թ). պարկապառուկը (ձեռ. թ. 6670, էջ 120թ, 138ա, 166թ եւ թ. 9599, էջ 188). վերջապէս՝ հնագոյն, հորիշնական դիրքով ըստուող անկոթ քնարը (ձեռ. թ. 349, էջ 113թ). տակիղը (ձեռ. թ. 189, էջ 302թ եւ 593թ, թ. 349, էջ 517թ). Կոթաւոր քնարը (ձեռ. թ. 206, էջ 260ա) եւ այլն։ Վաղ միջնադարին աւելի յատուկ են՝ ասենք՝ ծնծաղարդակը (Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թ. 349, էջ 31թ). եղէճեայ գլանաճեւ ու փայտեայ կոնաճեւ փողային նուազարանները (ձեռ. թ. 5512, էջ 2թ եւ թ. 5634, էջ 25թ). պղնձեայ ուղիղ եւ ողորուն փողային նուազարանները (ձեռ. թ. 2804, էջ 22թ, թ. 5783, էջ 17թ, թ. 349, էջ 475թ, թ. 5269, էջ 23թ եւ թ. 349, էջ 465ա). լարային անկոթ ու կոթաւոր կամիթաշար նուազարանները (ձեռ. թ. 7090, էջ 4թ, թ. 6230, էջ 258թ, թ. 346, էջ 280ա եւ թ. 6325, էջ 8թ). Բացի սրանցից, կան նաև տարբեր (այդ թուում եւ գուսանական նուազուողների (անսամբլների) նկարներ (ձեռ. թ. 212, էջ 246ա, թ. 198, էջ 45ա եւ թ. 184, էջ 216):

Առաելային զարգացած աւատափրութեան պատմաշրջանին կապուած գործիքներից են՝ կոթաւոր նիմէնք վեց լարանի սպատիպ քնարների տարատեսակները (Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թ. 6288, էջ 15ա, թ. 349, էջ 286թ, թ. 1923, էջ 7թ, թ. 184, էջ 127թ, թ. 5634, էջ 9թ), ուղատիպ քնարը (կամ հայկական ուղը) եւ նրանից սերուած բազմալոր բարդ կազմութեան գործիքները (Մատ. ձեռ. թ. 2680, էջ 140թ, թ. 5511, էջ 4ա, թ. 5472, էջ 18), իր կազմում սազ-սրափող-դափ ու կաստանեներ ունեցող գուսանական նուազուողը (ձեռ. թ. 6776, էջ 40ա), քամանի, սափիդ, փող եւ քանոն նուազող գուսանների խումբը (ձեռ. թ. 5472, էջ 242) եւ այլն։

Ուշ միջնադարի կապակցութեամբ պէտք է նշել, որ այս լրջանում լայնօրէն կիրառում են անցեալից պահպանուած մի ամբողջ շարք գործիքներ, այդ թուում՝

Միջնադարեան մանրանկարները հնարաւորութիւն են տալիս նաեւ նուագարանների յիշեալ բազմազանութեան մէջ կողմնորոշուելով տարբերել նրանց չորս հիմնական խմբերը<sup>32</sup>, ըստ ձայնի աղքիւրի, որոնք են՝ ինքնահնչիւն, թաղանթահնչիւն, օդահնչիւն եւ լարահնչիւն գործիքները:

Այնուհետեւ, նշուած խմբերի լրջանակներում բաւական պարզ տարբերում են նուագարանների տեսակները՝ ըստ դրանք հնչեցնելու (ձայն ստանալու) կերպի: Ասենք՝ Օդահնչիւնների խմբում՝ սրբինգային նուագարանները (բըլուլ), լեզուակայիններից (զուռնա), եւ կամ՝ լարահնչիւնների խմբում՝ աղեղնային գործիքները (քեմանչա), կամիթահարներից (սազ) եւ այլն:

Այս կամ այն չափով որոշակի զանազանուում են նուագարանների ենթատեսակները եւս, տուեալ տեսակի լրջանակներում, ըստ նրանց կազմաձեւի: Օրինակ՝ կսմիթահարների շարքում՝ երկար ու կարճ կորաւոր գործիքները, անկոր նուագարաններից (քանոն), պղնձեայ փողայինների շարքում՝ գալարաձեւ ոլորուն գործիքները, ուղիղ երկար չեփորներից:

Զգալիօրէն նուազ յստակ գաղափար են տալիս մանրանկարները նուագարանների ընդհանուր մեծութեան (փոքր սազ, մեծ սազ եւ այլն), առաւել եւս՝ նրանց մասերի յարաբերութեան, չափերի մասին (մօտաւոր ճշտութեան դաստողագիւններ հնարաւոր է լինում անել, երբ նուագարանը պատկերուած է երաժշտի ձեռքին եւ երբ, հետեւարար, կարելի է մարդու մարմնի բաղդատութեամբ դիտարկել այն):

Շարունակելով պէտք է նշել, որ ըստ մանրանկարների կարելի է, անշուշտ, հաւաստել՝ թէ, ասենք, պատկերուած փողային գործիքը ծակտիներով է: Բայց հնարաւոր չէ պնդել, թէ պատկերուած ծակտիների քանակը ճշգրիտ տուեալ է: Նմանապէս, չենք կարող անպայման ճշգրիտ տուեալ համարել մանրանկարներում պատկերուած լարային նուագարանների քանակը (դատելով, օրինակ, կոթաւոր գործիքի ականջների քանակից):

Վերջապէս, մանրանկարները քննելով բնաւ չենք կարող հասկանալ՝ թէ ի՞նչ նիթից է չինուած տուեալ նուագարանը (ծիրանի,

- աղենաւոր նուագարանները, որոնք եւ ոչ հազուաղէպ պատկերուում են ձեռագրերում: Տե՛ս Մաշտոցի անուան Մատենագրան, ձեռ. թ. 2804, էջ 38ա (քեմանի), թ. 5783, էջ 22ա (քեմանչա, սրափող, դափ): եւ այլն:
32. Արդի գործիքադիտութեան մէջ նիշան այս սկզբունքով են տարբերուում նուագարանների հիմնական խմբերը (ըստ ձայնի աղքիւրի): Այդ սկզբունքի համաձայն, հիմքերորդ նորագոյն խումբը ներկայացնում են ելեկտրանուագարանները, որոնցում հնչիւնային տատանումների աղքիւրներն են՝ ելեկտրամեքենական արտադրիչները, ելեկտրոնային լամպեր, կամ ելեկտրականութեամբ գրգռուած կամերտուններ:

թթենու, թէ, ասենք, ընկուզենու փայտից), եւ կամ՝ լարերը պղընձեայ են եղել թէ արծաթեայ, եւ կամ՝ որ ամենակարեւորն է՝ ինչպիսի լարուածք է ունեցել գործիքը, որո՞նք են այն նուագելու մասնաւոր հնարանքները եւ այլն:

Առանձին եւ ոչ պակաս կարեւոր խնդիր է՝ յարաբերելով նոյնականացնել նուագարանների բազմապիսի անուանակոչութիւնները, որոնք յայտնի են հայ հին ու միջնադարեան, ինքնուրոյն ու թարգմանական գրականութիւնից, գիտական եւ գեղարուեստական գործերից, պատմիչների աշխատութիւններից եւ բառարաններից՝ երաժշտական գործիքների այն պատկերների հետ, որոնք ցրուած են ձեռագրերում: Մի-երկու ուշ միջնադարեան գրչագրերում նուագարանների պատկերների տակ հանդիպող հիմնականում օտարալեզու (արեւելեան) անուանակոչութիւնները այս գործին լուրջ նպաստ չեն բերում<sup>33</sup>:

Նշուած կէտերը, որոնց վրայ լոյս չեն սփռում, ասացինք, մանրանկարները, անհրաժեշտ է աստիճանաբար պարզել՝ համեմատական երաժշտութեան եւ պատմա-բանակիրական ու տիպարանական հետազոտութիւնների հիման վրայ: Որոշ բան արուած է այդ ուղղութեամբ եւ արլում է զեռեւս: Մանօթանանք դրան, մանրանկարների մասին մեր խօսքն ամփոփելուց առաջ: Ստորեւ յաջորդաբար կ'անդրադառնանք ինը կէտերի (նուագարանների անունները, դասակարգման միջնադարեան սկզբունքները, լարելու եւ կենցաղավարման հանգամանքները եւ այլն), որ մեզ հնարաւորութիւն կու տան պատմատեսական մօտեցմամբ լուսաբանելու մի շարք իրար հետ կապուած կարեւոր հարցեր:

Աւանդական նուագարանների բազմապիսի անուններ են հանդիպում հայ հին ու միջնադարեան մատենագրութեան մէջ, անուններ՝ որ կուտակուել են անյիշատակ ժամանակներից մինչեւ 18րդ դարի վերջերը: Դրանց լիակատար ցանկի կազմումը մի կարեւոր խնդիր է<sup>34</sup>: Հաւաքուած եւ հաւաքուելիք անունների ու նուագարանների

33. Խուըր Մաշտոցի անուան Մատենադարանի թթ. 6670 եւ 9599 ձեռագրերի՝ աղթարական բովանդակութեան հատուածներում առաջ թրուած նուագարանների պատկերների են անուանակոչութիւնների մասին է: Խնդիրն այն է, որ յիշեալ նուագարաններն իրենք չտա աւելի հին են, քան նրանց անուանակոչութիւնները, որոնք տարածուել են ուշ միջնադարում ու առաւելապէս պատմական Հայաստանի արեւելան կողմերում:

34. Մի ամբողջ շարք նուագարանների անուններ մենք հաւաքել ենք ինքնուրոյն եւ թարգմանական, պատմական, գիտական ու գեղարուեստական գրականութիւնից (այս մեր աշխատութիւնները՝ «Քննական տեսութիւն Հայոց կիմ և միջնադարեան երաժշտութեան պատմութեան», ՀՍՍՀ ԳԱ-ի «Լրաբեր» (հաս. գիտ.), 1970, թ. 10, 1971, թթ. 1, 5, 9: եւ Երաժշտութեան տեսութիւնը կիմ Հայաստանում, երեւան, 1977 (ռուսերէն): Անհրաժեշտ է լրացնել արւածը՝ հետազոտութեան ոլոր-

միջնադարեան պատկերների նոյնացման խնդրին անդրադարձել ենք արդէն: Դա տուեալ հարթութեան վրայ ծագող խնդիրների շարքում կարեւորագոյններից է, բայց միակը չէ: Նուազ հական չէ տարբերել բնիկ հայկական եւ օտար (փոխառնուած) անունները: Վերջիններիս շարքում կան թէ վաղուց հայացուած<sup>35</sup>, եւ թէ այս կամ այն պատմաշրջանում երեւացած, բայց չկայունացած անուններ<sup>36</sup>: Անկախ դրանից, առանձին հարց է որոշել, թէ որ (եւ, ընդհանուր առմամբ, սակաւ) դէպերում օտար անուան փոխառնումը կապուած է եղել սկզբբունքորէն նոր նուագարանի ծանօթութեան հետ<sup>37</sup>: Եւ երբ (ու շատ աւելի յաճախ) օտար անունների փոխառնումն ու տարածումը հայկական շրջանակներում հետեւանք է եղել Հայաստանում օտար տիրապետութեան եւ կամ գաղութային կեանքի պայմանների<sup>38</sup>:

Նուագարանների եւ նրանց վերաբերող անուանակոչութիւնների յարաբերութեան խնդիրը ունի նաև լուսաբանութեան կարօտ երկու մասնաւոր կէտ: Ոչ հազորադէք՝ միեւնոյն նուագարանը, տարբեր տեղերում եւ տարբեր ժամանակներում, տարբեր անուններ է ստանում (նոյնիսկ մէկ երկրի սահմաններում, այլեւս չանդրադառնալով ընդգրկուն աշխարհամասերին), եւ կամ, ընդհակառակն, միեւնոյն անուանակոչութիւնը տարբեր տեղերում եւ տարբեր ժամանակներում՝ տարբեր երաժշտական գործիքներ է նշանակում: Այսպէս, հայ մատենագորութեան մէջ տակաւին նրդ դարից յիշատակուող փանդի՛նի մասին ձեռագրական հին նիւթեր<sup>39</sup> եւ 8. Դրամանակերտցին<sup>40</sup> վկայում են, որ այն եղել է «աղէբախ», այսինքն կսմիթահար, եւ դա համապատասխանում է նրա կենցաղավարման հանգամանքներին,

- տը ներքաշելով բառարանագրային, համարաբրառային գրականութիւնը եւ, ի վերջոյ, ընդհանուպէս ողջ հայ հին մատենագրութիւնը:
35. Օրինակ՝ սրիմզը փոխական սրինչ-ից, փանդի՛նը լիդիական բանդուրա-ից, շնարը խեթական հնչինար-ից եւ այլն:
36. Աւենեկ՝ միջնագարում մի ժամանակ օգտագործուած չաշտա-ն (վեց լարանի սաղասիպ նուագարանի անունը), որ պարսկական sheshtar-ից է անցել հայերէնին, աղաւաղուած shesta եւ թուրքերէնում ceste դարձած ձեւերի միջոցով: Նոյնպէս՝ նաև բարբառ կամ բարբառ, պարսկական անուանակոչութիւնը, որ մի ժամանակ տրուել է հայկական ուղին՝ չորս լարանի քնարին:
37. Ալդիպահը ընդհանրապէս պիտի որոնել հայ ժողովրդի պատմութեան հնագոյն եւ հին շրջաններում, որ եւ գտուարագոյն խնդիր է:
38. Կիլիկիայի հայկական պետականութեան անկումից յետոյ եկող ժամանակների համար դա կարելի է ընդունել որպէս հաստատուն օրէնք:
39. Տե՛ս Մաշտոցի անուան Մատենագրաբան, ձեռ. թ. 6281, էջ 156թ (Վկայաբանութիւն Պորփիրոսի Գուսանին), որը բնագրի կիրառ-ին համապատասխանում է հայերէն փանդի՛նը: Տե՛ս նաև ձեռ. թ. 3201, էջ 66թ (Մեկնութիւն յատուկ անուանց), ուր կայ՝ «կիթառն-փանդի՛ն»:
40. 8. ԴՐԱՄԱՆԱԿԵՐՏՑԻ, Պատմութիւն, երուսաղէմ, 1843, էջ 14 (այստեղ պատմիչն նաև «կտնտցահար» է անուանում փանդի՛նը, որ այնքան էլ համոզի չէ, ինչպէս կը տեսնենք):

մանաւանդ քաղաքային միջավայրում: Իսկ ձեռագրական մի այլ ուշագրաւ տուեալի համաձայն, նոյն փանդիռնը՝ «պարկ է ուշենի, եւ փող է դրած ի ներս»<sup>41</sup>: Սա՝ պարկապղուկն է, որը միջնադարում «տըկզարկ» է կոչուել («տիկ»ից) եւ որը հեռաւոր, գիւղական վայրերում «փանդիռն» կարող էր համարուած լինել՝ յատկապէս այն դէպքերում, երբ գուսանները նրա նուագակցութեամբ հին վէպեր ու զրոյցներ պատմէին, մէջ ընդ մէջ երգելով:

Առհասարակ, սոյն եւ նման հարցերը աւելի ստոյգ կը պարզուեն, երբ հնարաւորութիւն ունենանք իւրաքանչիւր նուագարան եւ իւրաքանչիւր անուն մասնաւոր քննութեան առարկայ դարձնել ու հետեւողականօրէն ուսումնասիրել դրանք իրենց պատմական զարդացման մէջ<sup>42</sup> (ժամանակային, տարածական ու նաեւ սոցիալական առումներով): Ասուածը մի օրինակով բացատրած լինելու համար յիշենք, որ ֆնարը հելլենիստական Հայաստանում նշանակել է Լյու յորջորջմամբ յայտնի անտիկ նուագարանը<sup>43</sup>: Միջին դարերում, Յովհաննէս Երզնկացին քնար ասելով հասկացել է հայկական ուղը<sup>44</sup>: Եւ 18-19րդ դարերում, Գ. Լեռնեանի հրատարակած նիւթերից դատելով, քնար է կոչուել քանոնատիպ նուագարաններից մէկը<sup>45</sup>: Իմանալի է եւ այն, որ միջնադարում քնար եւ փող խօսքերը նաեւ հաւաքական անուանումներ են եղել, նշանակելով, համապատասխանաբար, լարային եւ փողային նուագարաններ առհասարակ:

«Փողն այն է, - կարդում ենք միջնադարեան ձեռագրում, - որ բուկ կամ սունա լինի, որ ի բերդի վերայ կամ ի բարձր տեղաց վերայ փշեն, ար հաւասար լսեն: Փող հնչեն որ զօրքն երկու կողմանքն յորդորին, ի պատերազմն շարժին. դարձեալ փող է յորժամ հնչեն նայ] թէ ի յուրախութեան եւ խնդութեան, եւ նայ ի սուգ եւ ի յարտասուս... որպէս գուսանացն ճայնքն: Եւ փող է դարձեալ որ ի տարեկան տաւնքն հնչեն, որ ժողովին եւ ի տաճարն գան եւ Աստուծոյ երախտեացն տօն եւ յիշատակ կատարեն: Եւ փող է ի գալստեան յորժամ հրեշտակապետ գոչէ, որ ամենայն մեռեալք... յառնեն»<sup>46</sup>:

41. Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թ. 2152, էջ 209բ:

42. Ձեռագրերում տուեալ նուագարանի անուանակոչութեան թէկուզ աննշան թուացող տարրերակումներն իսկ նկատի են առնուած երթեմն: Տե՛ս նոյն 2152 ձեռագրի նոյն էջը (200թ), ուր նաեւ քանի մասին խօսք կայ:

43. Տե՛ս մեր յօդուածը՝ Հիմ Հայաստանի հելլենիստական մշակոյթի մասին տուեալ-ների ընդհանուր ամփոփում (վերոյիշեալ «Էլքրենէ»... ժողովածուում):

44. Տե՛ս մեր յօդուածը՝ Յովի. Պլուտ Երզնկացին հայ միջնադարեան երաժշտութեան տեսարան, ՀՍՍՀ ԳԱ-ի «Պատմա-բանասիրական հանդէս», 1983, թ. 2-3, էջ 134:

45. Լեհուննեն Գ., Երկիր, Երեւան, 1963, էջ 216:

46. Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թ. 848, էջ 131ա-բ: Այստեղ յիշատակուած «բուկ»ը գրում էր «պուկ» ձեւով էլ, որտեղից եւ՝ «պկազարկը»: Տե՛ս Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թ. 695, էջ 219 եւ 220 (ուր կայ եւ «պկազարկն» եւ «տօպօպղարկն»):

**Այստեղ** առնուազն եօթ-ութ տեսակ նուագարաններ են յիշատակ-  
ւում «փող» ընդհանուր անուան տակ<sup>47</sup>: Նոյնն է պարագան «քնար»  
անուան դէպում եւս: Այսուհանդերձ, ձեռագրերում իր անդրա-  
դարձումն է գտել նաեւ միեւնոյն, ասենք՝ լարային խմբին պատկա-  
նող նուագարաններն իրենց անուններով եւս տարրերելու աւանդոյ-  
թը: Այսպէս, Սաղմոսի մեկնութիւնը պարունակող ձեռագրերից մէ-  
կում հաստատագրուած է. «Մի աղին (իմա' քնարը - Ն. Թ.)»՝ մերոյ  
մարմին եւ հոգի: Եւ Բ. աղին՝ բան եւ ճայն մեր, կամ հաւատքն եւ  
գործքս մեր: Եւ Դ. աղին՝ չորեքնիւթեայ բնութիւնս եւ Դ. առաքի-  
նութիւնք: Խսկ է. աղին՝ է. զգայարաննք մարմնոյս, [եւ] է. զօրու-  
թիւնք հոգւոյս: Եւ Ժ. աղին՝ Ժ. զգայութիւնք հոգւոյն եւ մարմ-  
նոյն»<sup>48</sup>:

Լարային նուագարաններից այստեղ յիշատակուած են քնարների  
յատկապէս այն տարատեսակները (միաղի, եօթնաղի, տասնաղի եւ  
այյն), որոնց կապակցութեամբ հնարաւոր է որեւէ յարմար խորհըր-  
դանշական (սիմբոլիկ) բացատրութիւն տալ: Անկախ դրանից, միջ-  
նադրեան Հայաստանում կենցաղավարել են նաեւ երեք լարանի  
(դրան յատուկ կ'անդրագառնանք ստորեւ), վեց լարանի (արեւելեան  
շաշթա կամ, ինչպէս նշեցինք, աղաւաղուած չաշտա անուամբ), ութ  
լարանի եւ այլն նուագարաններ, որոնք յիշատակում է Առ. Սիւնե-  
ցին<sup>49</sup>, այլեւ մինչեւ 40, 70 եւ 100 լարանի նուագարաններ, որոնց  
մասին տեղեկութիւն է տալիս Ց. Ղրիմեցին<sup>50</sup>:

Հայկական միջնադարեան ու նաեւ համընդհանուր երաժշտական  
գործիքագիտութեան պատմութեան համար ուշագրաւ նիւթեր են՝

47. Նման երեւոյթ է մատնանշում ֆարմերը եւս՝ արաբական երաժշտութեան մասին խօսելիս: Հմմտ. H. FARMER, *A History of Arabian Music*, London, 1929, p. 16 (the term *mizmar*... etc.).

48. Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. Բ. 723, էջ 284ա:

49. Ուր լարանի քնարի մասին տես Ա.Ի.Ա.ՔԵԼ Սիրինեթի, Յաղագս Քերականութեան համառատ լրացնութեամբ (աշխատասիրութեամբ Լ. Խաչերեանի), Լոս Անձելես, 1982, էջ 91: «Նաշայիր» մասին տես՝ Գիրք սահմանաց սրբայ Դաւթի ամեյադր փիլսոփայի՝ Հայոց իմաստասիրի: Եւ յիս ժամանակի արարեալ լրացնութեամբ եղած մեկնութեամբ տեսան Սուաքիի եռամեծ վարապետի... Մաղրաս, 1797, էջ 615: «Ջաշտա» ձեւը հանդիպում է Կ. Երդնկացու քերթուածներում: «Մշրուազ դու սազէ զաշտան»... Տես Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ, Կ. Երգմկացի, Վենետիկ, 1905, էջ 175:

50. Այդ նուագարաններն են՝ համապատասխանաբար՝ «սալդիր» (երբեմն գրւում է սանդիր) (=սանթո՞ւր), «զանոն» (քանոն) եւ «արդանոն»: Տես' ՅԱԿՈԲ ՂԻՒ-ՄԵՅԹԻ, Տոմարագիտական աշխատութիւններ (աշխատասիրութեամբ Ձ. Էյնաթ-եանի), Երեւան, 1987, էջ 197-198 (Մեկնութիւն Տումարի): Այստեղ (էջ 188) «արդանոնի» կապակցութեամբ առաջ է բերուած «վեց հարիւր աղի» թիւը, որ  
ակնյայտ վրիպակ է (ձեռագրում «հարիւր» է՝ «Ճ»):

նուագարանների դասակարգման սկզբունքին վերաբերող գաղափարները, որոնք մեզ յայտնի են Յովհ. Երզնկացու եւ Առ. Մինեցու աշխատութիւններից։ Հիմքեր ունենք հաստատելու, որ Երզնկացու գործիքագիտական հայեացքներին վերաբերող նիւթերը լրիւ յայտնաբերուած չեն տակաւին։ Երզնկացին իր Քերականի մեկնութեան մէջ խօսելով՝ գործիական ձայների մասին, օրինակ է բերում լարային եւ փողային նուագարաններին յատուկ հնչողութիւնները, ասելով՝ «որպէս փողք եւ քնարք»։ Դարձեալ, նոյն աշխատութեան մէջ, Երզնկացին «չորեքաղեան քնարին» վերաբերող ծանրակշիռ գատողութիւններից առաջ նախ հաստատում է, որ «բազում են ձեւք եւ կերպարանք գործեաց։ Է՛ որ ի բազմաց լարից եւ աղեաց, եւ է՛ որ սակաւ, եւ է՛ որ փողովք»<sup>61</sup>։

Անհնարին է ենթադրել, որ երաժշտարուեստի չափակշռութային հարցերը յատուկ կարեւորած Երզնկացին անուշագրութեան մատնած լինէր հայկական եւ առհասարակ մերձարեւելեան աւատատիրական մշակոյթի պատմական զարգացման ամենափայլուն շրջանում՝ 13րդ դարում կենցաղավարած հարկանային բազմապիսի նուագարանները։ Ամենայն հաւանականութեամբ՝ նա դրանց անդրադարձել է այլ առթիւ։ Այսպէս թէ այնպէս, Երզնկացին փաստօրէն տարբերել է նուագարանների երեք խումբ՝ հարկանային, փողային եւ լարային։ Դասակարգման այս սկզբունքը, որը զիմանառ գերերի մէջ նկատի ունի ձայնի ստացման աղբիւրն ու կերպը, եւ որը միջին դարերում աստիճանաբար տարածեւում էր Արեւելքի եւ Արեւմուտքի քաղաքակիրթ երկրների երաժշտագիտական շրջանակներում, ուղղակի նախապատրաստել է գիտական արդի մօտեցումը<sup>62</sup>։

51. ՑՈՎՀԱՆՆԻԿՍ ԵՐՁԱԿԱՑԻ, Հաւաքումն մեկնութեան Քերականի (աշխատափրութեամբ Լ. Խաչերեանի), Լոս Անձելս, 1983, էջ 132։ Զայնի եւ նուագարանների մասին Երզնկացու հայեացքները ձեռազբերում յարատեւել են նաեւ նրա Քերականի մեկնութիւնից կաստուած մասնաւոր արտագրումների ձեւով։ Հմտու Մաշտոցի անուան Սատենազարան, ձեռ. թ. 6686, էջ 1ա-Զը։ Երզնկացին ինքն էլ, սակայն, ժամանակին օգտուել է տարբեր աղբիւրներից եւ, մասնաւորապէս, «կասն գուսանական արուեստց» կամ նման խորագրով մի գրուածքից։ Վերջինս թէպէտև պահպանուած է 17-18-րդ դարերում գաղափարուած ժողովածուներց մէկում (տե՛ս Մաշտոցի անուան Սատենազարան, ձեռ. թ. 4618, էջ 56ա-56թ, ուր հանգլապում են նուագարանների հետաքրքիր անուններ, այդ թուում՝ «Հոռոմպաւուն», չանկն, բարբուսն»), բայց զային է առնուազն 12-13րդ դարերից։ Քանի որ պարզ է, որ մեր միջնադարանն գրիչները գուսաններին չէին վերագրի Երզնկացու հանրայայտ աշխատութիւններ քաղուած այլեւայլ հատուածներ, գրանք «ուամկացնելով» ոճական տեսակէտից, այնինչ Երզնկացին կարող էր գիմել եւ իրօք գիմել է «գուսանական արուեստին», յատկապէս աշխարհիկ երաժշտութեան հետ կապուած հարցերը լուսարաններին։
52. Ինչպէս վերը նշեցինք, արդի՝ աւելի ճգրտուած գիտական մօտեցմամբ՝ ըստ ձայնի ստացման աղբիւրի զանազանուամ են նուագարանների չորս խմբեր, որոնց 20րդ դարում գումարուում է ելեկտրանուագարանների խումբը։

Բայց միջին դարերում չօշափուած են եղել նուագարանների դասակարգման այլ սկզբունքներ եւս: Դրանցից մէկը, որով հաշուի է առնւում նուագարանը հնչեցնելու կերպը, ժամանակին գրաւել է Առ. Սիւնեցու ուշագրութիւնը, որ եւ շատ ինքնատիպ մի դասակարգութիւն է առաջարկել: Հարկանային, փողային եւ լարային նուագարանները նա բաժանել է երկու կարգի՝ «Ճեռօք» ու «Փշմամբ եւ ճեռօք»: «Արդ ճեռօք, - գրում է նա, - որպէս գուփուկ, եւ նաղարայ, եւ դար, եւ ծնծղայք, եւ շաշթա, եւ լաւառն, եւ զանկ, չաղանա. իսկ փշմամբ եւ ճեռօք՝ որպէս սուռնա, եւ նաֆիր, եւ շուի, եւ տըկազարկ, որ զտիկն փչէ եւ զանազան ձայն հանէք»<sup>53</sup>: Այսպիսով՝ մի խումբ են կազմում հարկանայիններն ու լարայինները («Ճեռօք»), եւ մի այլ խումբ՝ փողայինները («Փշմամբ եւ ճեռօք»):

Լարուածքի հարցերին վերաբերող նիւթերը չափազանց սակաւաթիւ են ճեռագրերում: Միջնադարեան մանրանկարներում հանդիպող սրինգները, փողերը ոչ հազուադէպ հինգ ծակտիկներով են պատկերուած լինում: Եւ դա գրեթէ միշտ վստահութիւն է ներշնչում, քանի որ ունենք գրաւոր հաստատուած վկայութիւն եւս: Գրիգոր Տաթեւացին փողի հինգ ծակտիկները համեմատում է՝ խաչուած փրկչի մարմնի խոցուած հինգ տեղերի հետ. «Եւ հինգ ծակ փողոյն՝ հինգ տեղի խոցուածոց մարմնոյն...» գրում է նաև<sup>54</sup>: Պէտք է ասել՝ հինգ ծակտիկներով փողային նուագարանները կատարողական բաւականին լայն հարաւորութիւններ են ընձեռել երաժիշտներին, եւ պատահական չէ, որ դրանք դարեր շարունակ կենցաղավարել են Հայաստանում<sup>55</sup>:

Լարային նուագարաններից՝ եռալար քնարի մասին ունենք Սարկաւագ վարդապետի մի բացատրութիւնը, որ հաստատագրուած է Փիլոն Ալեքսանդրացու աշխատութիւններում հանդիպող «մէջն ծայրիցն զուգամասամբն» խօսքերին նրա սուսած լուծման մէջ, այսպէս. «որպէս եւ է տեսանել ի լարս քնարից եւ ի ձայնս եղանակաց. առաջինն սուր լինի եւ միջինն՝ բութ եւ եղերին՝ կակուղ, եւ այնպէս յարմարին ընդ միմեանս, որպէս Զ-ն առ Դ-ն եւ Դ-ն առ Գ-ն»<sup>56</sup>: Ինչպէս

53. Տե՛ս Գիրք սահմանաց սրբոյն Դաւթի ամեադր փիլիսոփայի՝ Հայոց իմաստախրի: Եւ յետ ժամանակի արարեալ լուծումն սորիմ հոգիչան մեկնութեամբ Տեառն Առաքելի եռամբ Վարդապետի..., Մազրաս, 1797, էջ 615:

54. Լուծմումք դժուարիմաց բամից գրոցն Յօրայ, արարեալ ի Գրիգորէ Տաթեւացոյն, Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թ. 1115, էջ 98բ:

55. Թիշենք, որ Գառնիի անտիկ շերտից գտնուած սրինգն էլ հինգ ծակտիկներ ունի:

56. «Լուծմումք եօթմից գրոցն Փիլոնի իմաստախրի Տերայցեցոյ», Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թ. 2595, էջ 283թ: Մեկնողական այս աշխատութեան հեղինակային պատկանելիութեան մասին աե՛ս Բրաբիոն գրչոււու կարծիքը (նոյն տեղը, էջ 241թ), Ա. Ա. ԱՐՄԱՀԱՄԵՍՆ, Եռվիաթեւէս իմաստախրի մատենագրութիւնը, Երեւան, 1956, էջ 58-59, եւ Գ. Գրիգորիսն, Փիլոն Ալեքսանդրացու

տեսնում ենք, այստեղ Սարկաւագ վարդապետը պարզաբանման կարգով օրինակ է բերում իրեն ծանօթ հայկական երեքլարանի մի քնար, եւ հաստատում որ վերջինս ունեցել է քառեակ-հնդեակային տիպի իւրայատուկ լարուածք: Ամենք՝ կոնտր-օկտափ «դռ» ձայնը որպէս հիմք ընդունելով՝ G (= 3) - c (= 4) - g (= 6) լարուածքը:

Այս լարուածքը հիմնուած է մաքուր քառեակի, հնդեակի եւ ութեակի կայուն յարաբերութիւնների վրայ: Ինչպէս գիտենք, վերջիններս վճռորոշ գեր են կատարել նաև «ներդաշնակութեան հենքի» տիպի լարուածքներում (e - a - h - e', c - f - g - c', g - c - d - g' եւ այլն), որոնք հայ մատենագրութեան (թարգմանական եւ ինքնուրոյն գրականութեան) մէջ վկայուած լինելով 5րդ դարում<sup>57</sup>, գործնականում կենցաղավարել են թէ շատ աւելի վաղ, եւ թէ աւելի ուշ՝ ողջ միջնադարի ընթացքում եւ նոր ժամանակներում: Մովսէս Խորենացու յիշատակած լարաւոր կսմիթահար նուագարանը՝ «փանդիոնը», օրինակ, ըստ բոլոր տուեալների, ունեցել է ճիշտ «ներդաշնակութեան հենքի» տիպի լարուածք (c - f - g - c' կամ c - f - g), ինչպէս հին Արեւելքի մի շաբէ քաղաքակիրթ ժողովուրդների բանաստեղծ-երաժիշտ-երգիչների համապատասխան գործիքները, որոնք կիրառուել են ազգային վէտերի երաժշտական արտասանութեանը նուագակցելու համար<sup>58</sup>: Իսկ «ներդաշնակութեան հենքի» կրկնապատկման ուրուագծին համապատասխանող լարուածքը (g - d' - g' - d<sup>2</sup>), որը ծառայել է աւելի մեծ ձայնածաւալի լարաւոր նուագարաններ լարելիս, հնարաւորութիւն է տուել միաձայնային երաժշտութեան մեղեդիական տարբեր պտոյտների ութեակային տեղափոխութեան հնարանքը կիրառելու եւ դրանով՝ այլազան նուագուրդներին (անսամբլներին) նուագակցելու<sup>59</sup>: Երկու տիպի ձայնային յարաբերութիւններն էլ կենցաղավարել են մինչեւ մեր օրերն իսկ: «Ներդաշնակութեան հենքի» յարաբերութիւնները՝ հայկական սազի լարուածքներից մէկում (a - d' - e' - a' ձեւով)<sup>60</sup> եւ նոյն հենքի կրկնապատկումը ենթադրող յարաբերութիւնները՝ քեմանչայի լարուածքներից մէկում (a - e' - a' - e' ձեւով): Ամենայն հաւանականութեամբ, այսպիսի եւ կամ սրան շատ

աշխատութիւնների հայ մեկնութիւնները, «Բանքեր Մատենադարանի», թիւ 5, էջ 99-101:

57. Տե՛ս մեր յօդուածը՝ ներդաշնակութեան հենքի ուսմունքը միշմադարեան Հայաստանում (5-8րդ դդ.), ՀՍԽՀ ԳԱ-ի «Պատմա-բանասիրական հանդէս», 1986, թ. 1, էջ 76-92:

58. Նոյն տեղը, էջ 79, 83:

59. Նոյն տեղը, էջ 84:

60. Սովետական Միութեան ժողովուրդների երաժշտական գործիքների Ատլաս, Մոսկովա, 1975, էջ 119 (ռուս.):

61. Նոյն տեղը, էջ 122:

մօտիկ մի լարուածք ունեցած պիտի Անհը նաեւ Գր. Նարեկացու յիշատակած «աղէյարմար» ջութակը<sup>62:</sup>

Միջնադարեան Հայաստանին եւ Մերձաւոր Արեւելքին վերաբերող մի շարք փաստերի համակողմանի քննութիւնը ժամանակին մեզ հնարաւորութիւն էր տուել պարզելու նաեւ Յովկաննէս Երզնկացու յիշատակած «չորեքաղեան քնարի» կամ հայկական ուղի լարուածքը<sup>63:</sup>, որպէս ձայների քառեակային յարաբերութիւն՝ մասնաւրապէս՝ G - c - f - b: Սա՝ կարճ կոթով կամիթահար նուագարանի կատարողական հնարաւորութիւններին համապատասխանեցուած լարուածք է: Միջնադարեան Հայաստանում կենցաղավարել են երկայն կոթով յարաւոր նուագարաններ եւս, որոնց կոթի (յարատեղի) վրայ մատնատեղեր (փարզաններ) են եղել: Եւ ահա, նաեւ այդ մատնատեղերի կարգաւորութեան սկզբունքի մասին թէեւ ընդհանուր, բայց արժէքաւոր մի տեղեկութեան ենք հանդիպել 14րդ դարի առաջին կէսին վերաբերող ձեռագրական յօդուածում, որի համաձայն՝ դեռեւս Դաւիթ Անյաղթի «Սահմանքում» առաջ բերուած եւ «Երկպատիկ», «Կիսաբոլոր», «մակեռուակ» ու «մակեռուակ» կոչուող հնչիւնային յարաբերութիւնները «ի յլ ձայնին փարտային երեւի, որ երաժշտական գուասնն, զշաշտայն, զ՞ աղին կամ զ՞ աղին, կամ զմատն աղին հնչեցնէ»<sup>64:</sup>: Զափազանց շահեկան այս վկայութիւնից բնականօրէն հետեւում է, որ անցեալում գուասնական շրջանակներում գոյութիւն է ունեցել «ութ ձայնի փարզա» հասկացութիւնը, իսկ դա նշանակում է ոչ այլ ինչ, եթէ ոչ հայ միհաճայնային երաժշտութեան ութ ձայնեղանակների ընդհանուր հնչիւնաշարը վերարտադրող մատնատեղերի շարք<sup>65:</sup>:

Նուագարանների կիրառման ձեւերի վերաբերեալ անհրաժեշտ տեղեկութիւնները պէտք է քաղել ազգագրական, պատմական եւ այլ ընդհանուր տուեալներից: Ասենք՝ փանդիոնի «աղէբախ» լինելու մասին, ինչպէս եւ փանդոնահարթ-վիխասանի կատարողական արուեստում, «թիւ ասելու», երգելու, դիմաշարժութեամբ եւ տարբեր շարժումներով կերպար ստեղծելու եւ պարելու գործողութիւնների առկայութեան վերաբերեալ պատմական տեղեկութիւնների<sup>66:</sup> լոյսի

62. Սրբյ հօրմ մերոյ Գրիգորի Նարեկայ վամից վամականի մատենագրութիւմ, Վեհետիկ, 1840, էջ 244:

63. Տե՛ս մեր յօդուածը՝ Զայնի մասին ուսմումքը եիմ եւ միշնադարեան Հայաստանում, «Բանքեր Մատենադարանի», Հու. 6, Երեւան, 1982, էջ 164:

64. Տե՛ս Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թ. 1748, էջ 297ա («Սահմանք ասցեալ ի Դաւթէ»): Խոյնը տե՛ս նաեւ ձեռ. թ. 1931, էջ 96ա եւ թ. 55, էջ 402թ:

65. Հմմաւ. մեր յօդուածը՝ Ներդաշնակութեան հեմի մասին ուսմումքը Հայաստանում միջին դարերում (10-15րդ դդ.), «Բանքեր Մատենադարանի», Հու. 8, Երեւան, 1987, էջ 100-101:

66. Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տիգիս, 1913, էջ 27, 73, 86:

տակ առանց դժուարութեան հանգում ենք եղրակացութեան, որ վիպասանը կտնտոց չէր օգտագործի: Նա գործիքն էլ միշտ գրկած չէր կարող պահել, այլ պէտք է վզից կախէր, ըստ հարկին՝ լրիւ ազատ ձեռքեր ունենալու համար:

Նուագարանների կենցաղավարման հանգամանքների հարցն իր գլխաւոր գծերով առած հանգում է՝ դրանց կիրառութեանը մենանուագում, նուագուրդներում կամ համոյթներում (ժողովրդական, գուսանական, գիւղական, քաղաքային, թատերական), եւ նուագախմբերում (պալատական, ռազմական): Կարեւորագոյն խնդիրը՝ տըւեալ նուագարանի դերի պարզաբանումն է՝ համոյթում կամ նուագախմբում, եւ նրա հնարաւորութիւնների բացայայտումը մենանուագում: Միջնադարի վերաբերութեամբ խնդիրը որոշ չափով լուսաբանումն է, գործիքային նուագի ազդային տարեր ձեւերի՝ մինչեւ մեր օրերը յարատեած աւանդոյթների գիտական ուսումնասիրութեան միջոցով: Բայց լոկ որոշ չափով: Պատմագրութեան, ազգագրութեան ընձեռած նիւթերը կարող են էապէս լրացնել եղած պատկերացումները: Դափի մենանուագը, օրինակ, մեզ այնքան էլ ծանօթ երեւոյթ չէ այսօր: Մինչդեռ, Բալուի եւ շրջակայ գիւղերի հայութեան երաժշտական ինքնատիպ աւանդոյթների մասին Հ. Սարգիսեանի (Ալեւոր) խօսքերից երեւում է, որ Համբարձմանը կատարուող վիճակի խաղերի ու պարերի մէջ եղել են, բացի մեր իմացած՝ մենքդի, խմբական երգի ու պարերգի ընդհանուր ձեւերից, փոխեփոխ երգելու, ու նաեւ՝ դափի մենանուագի տակ մենապարելու ձեւերը<sup>67</sup>:

Քանի որ գործ ունենք միջնադարի հետ, պարզելի է նաեւ եկեղեցու վերաբերմունքը նուագարաններին եւ նուագական երաժշտութեանը: Բուն հարցն այն է, թէ հայ Եկեղեցին, վաղ աւատափրութեան շրջանում (մինչեւ 10րդ դարը), յունականի օրինակով, իրօք մերժել էր նուագարանների մասնակցութիւնը պաշտօնեղովութեան մէջ, թէ ոչ: Յայտնի է, որ նուագարանների կիրառութեան դէմ ուղղուած շարժումը տակաւին 3-4րդ դարերում սկսեցին ծաւալել ընդհանրական Եկեղեցու յոյն եւ արեւմտեան Հայրերը: Ասորի հովուապետները չշտապեցին ընդհանական այդ շարժմանը: Եփրեմ Խորին Ասորին ինքն իսկ նուագակցելի է տափով իր կցուրդները կատարող երգեցիկ խմբերին<sup>68</sup>: Այդ ժամանակ (4րդ դ.): Հայաստանում Ներսէս Մեծի ձեռնարկումներն ընդհանրապէս ժխտելով հեթանոսական սովորոյթները՝ ուղղում էին նաեւ նուագարանների գործածութեան դէմ (մասնաւորապէս յուղարկաւորութեանց ընթացքում): Սակայն

67. Տե՛ս մեր յօդուածը՝ Ցուշամատեանների հետմերով, «Էլմիածին», 1966, թիւ 9, էջ 102:

68. RUBENS DUVAL, *Anciennes Littératures Chrétiennes (La Littérature Syriaque)*, Paris, 1907, p. 14-15.

պատմութիւնից գիտենք, որ Ներսէս Մեծի մահից յետոյ նուագարանները դարձեալ երեւացին թաղման ծէսում ու դարեր շարունակ կիրարկուեցին նրա մէջ, որովհետեւ այլեւս չհալածուեցին հայ Եկեղեցու կողմից, ինչպէս ցոյց տուեց Վ. Հացունին<sup>69</sup>: Նուագարանների կիրառութիւնն ընդունուած աւանդոյթ է եղել մէջ նաեւ եկեղեցուց զուրս տեղի ունեցած հոգեւոր ուրիշ շքերթների եւ բացօթեայ արարողութիւնների ժամանակ: Բուն Եկեղեցում, ըստ եղած տուեալների, գործածուել են բոժոփառոր քոյցն ու բուրգառը, ծնծղան, կոչնակն ու զանգերը: Ամէն ինչից երեւում է, սակայն, որ այդ տըլեալներն այնքան էլ հին չեն: Յամենայն դէպս՝ այլ բան են յուշում վաղ միջնադարեան մի քանի կարկառուն դէմքերի բնորոշ արտայայտութիւնները, որոնցից երկուն առաջ բերեց դարձեալ Վ. Հացունին<sup>70</sup>. մաշտոցեան շարականներից մէկի պերճախօս սկզբնատողը՝ «Հընչմամբ փողոյ, սաղմոսարանաւ եւ քնարիւ օրհնեցէք ըզտէրն ի յերկինս» (Պահոց բձ), եւ Յովկան Օձնեցու շատ յատկանական մի ասոյթը, որին անդրագառնալու ենք ստորեւ: Սրանց կարող ենք աւելացնել Թէոդորոս Քոթենաւորի խօսքերը, որոնց հանդիպում ենք Աստուածածնին նուիրուած նրա ներբողում: «Ընդհանրական առաքելացն եկեղեցիք Քրիստոսի, փառատրողական երդարանութեամբ, հոգեզուարծ նուագարանօք վերագոչեսցուք ի սերկեան աւուրս դասախրմութեամբ»<sup>71</sup>: Պաշտօներգութեան մէջ հին սովորութեամբ նըւագարաններ չներմուծելու խնդիրը, մեծ ուշացումով, բարձրացնում են 10-15րդ դարերի հայ մատենագիրները<sup>72</sup>:

Գալով Յովկան Օձնեցու վերն ակնարկուած ասոյթին, նրանից պէտք է հետեւցնել, որ, ինչպէս եւ սպասելի էր, նուագարաններն ու նուագական երաժտութիւնը կիրառում էին միջնադարեան Հայաստանի վանքերում, թէ՛ տեսական հարցերի լուծման, եւ թէ ծայնային բարդ ստեղծագործութիւնների յղացման ընթացքում: «Եւ պարտ է ուսումնասիրացն եւ խոհականագունիցն, - գրում է կաթողիկոսը, - նուագարանօք քնարահարու լինել երաժշտական հոգւոյն. այլ եւ զբոլոր գոյացելոցն հնչեցուցանել ձայնից տեսակս»<sup>73</sup>:

69. ՀԱՅՈՒՆԻ Վ., Եկեղեցական երաժտութեան մասին, «Բազմավէպ», 1917, թիւ 5, էջ 207:
70. ՀԱՅՈՒՆԻ Վ., Հայ Եկեղեցւոյ երգերն, «Բազմավէպ», Վենետիկ, 1897, թ. 9, էջ 432:
71. Ցավանան նմաստասիրի Աւմձեցոյ Մատենագրութիւնն, Վենետիկ, 1953, էջ 199:
72. Առաջին հերինակը Գրիգոր Նարեկացին է, որ Ողբերգութեան մատեննի 92րդ, կոչնակին նուիրուած գլխում վերջինս անուանում է «արին նորոգ այլ իմն տեսակաւ առեալ մեզ ընդ հնոյն փոխանորդութեամբ» եւ այլն, որով փաստօրէն մերժում են «Հին» (իմա՞ Եկեղանսական) նուագարանները պաշտօներգութեան մէջ: Տե՛ս Սրբոյ օօրն մերոյ Դիթգորի Նարեկայ վամից վանականի մատենագրութիւնն, Վենետիկ, 1840, էջ 243-244:
73. Ցովհանն նմաստասիրի Աւմձեցոյ Մատենագրութիւնն, Վենետիկ, 1953, էջ 31:

իսկ աշխարհիկ կեանքում, միջին դարերի ողջ ընթացքում, եւ մանաւանդ զարգացած աւատատիրութեան լրջանում, գուսանական արուեստի աննախադէպ տարածմանը զուգընթաց՝ աւելի ու աւելի է մեծացել նուազարանների եւ նուազական երաժշտութեան դերը: Քաղաքային ունկնդիրների լրջաններում, չնորհալի փողհարների ելոյթներից յետոյ, աշխուժօրէն քննարկուել է գործիքային նուազի կերպարային բովանդակութեան խնդիրը: Հետաքրքիր այդ երեւոյթը գրաւել է մեր մատենազիրների ուշադրութիւնը<sup>74</sup>: Ինչպէս եւ լրացին գործիքին գերազանց տիրապետող վարպետ արուեստագէտների «զզարմանալի հրաշ» գործող նուազը<sup>75</sup>:

Նուազական երաժշտութիւնը կիրառական նշանակութիւն էլ է ունեցել Հայաստանում, հին եւ միջին դարերում: Այն՝ օգտագործուել է, մասնաւրապէս, հիւանդների բուժման ընթացքում: Այդ մասին յստակ տեղեկութիւններ են տալիս վերոյիշեալ «Կասն գուսանական արուեստից» հին գրուածքը եւ Յովկաննէս Երզնկացի Պլուգը<sup>76</sup>:

Վերջապէս մի յատուկ հարց էլ այն է, թէ մեր մէջ ովկեր են եղել նուազարաններ սարքող վարպետները: Ինչպէս այլուր, նոյնպէս, եւ Հայաստանում հնուց ի վեր նուազարաններ սարքող վարպետները, որպէս ընդհանուր կանոն, եղել են նաև իրենք՝ նուազածու երաժիշտները, ապա եւ նրանց ժառանգները, որոնց եւ փոխանցուել է կուտակուած մեծ փորձը, եւ այդպէս՝ սերնդէ-սերունդ, ոչ հազուադէպ միեւնոյն գերզաստանի անդամներին, բաւական երկար ժամանակ: Այդ աւանդովից շարունակուել է նոյնիսկ մինչեւ մեր ժամանակները: Բայց ծեռագրական տուեալ էլ ունենք, որի համաձայն՝ «չաշտայ կու յնեն մտրուպքն»<sup>77</sup>: Արդ, այս մտրուպք, որ արաբերէն խօսք է (μυτρίδ) եւ միջին դարերում մի առժամանակ օգտագործուել է գուսանի փոխարէն, երգիշ-նուազածու-երաժիշտ է նշանակում<sup>78</sup>: Եղած տուեալները խօսում են այն մասին, որ Հայաստանում եւ Կիլիկեան հայկական պետութեան սահմաններում, զարգացած աւատափրութեան լրջանում բարձր ծաղկման է հասել քաղաքային կեանքում բազմացած եւ համբարութիւններում միաւորուած հայ

74. Մաշտոցի անուան Մատենազարան, ձեռ. թ. 1053, էջ 301ա) «որք լսեն զայն փողոցն, զանազան նմանեցուցանեն, ոմն զայս ինչ ասէ թէ ասէ՝ եւ ոմն զայս, եւ վիճող բառս, զի զանազան կարծիքն ընդդէմք են իրեաց եւ այլ ընդ այլոյ լսեն զայնսն...» (Փիլոն Ակեբասնդուստու գործերի մեկնութիւնից):

75. ՅԱԿՈՅ ՂՐԻՄԵՅԻ, Սեկնարիս Տումարի (ան' վերոյիշեալ հաստարակութիւնը՝ թակոր Ղրիմեցի, Տումարափական աշխատութիւններ, էջ 198):

76. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԱՆԿԱՅԻ, Հաւաքում մեկնութեան վերականի (աշխատասիրութեամբ Լ. Խաչերեանի), Լու Անձելես, 1983, էջ 133-134:

77. Մաշտոցի անուան Մատենազարան, ձեռ. թ. 9330, էջ 156թ:

78. ԱՃԱՌԵՍԱՆ ՀՐ., Հայերէն արմատական բառարան, հու. Գ, Երեւան, 1977, էջ 389:

վարպետների՝ այլազան նուազարաններ պատրաստելու արուեստը։ Դա եղեւում է նրանից եւս, որ ուշ միջնադարում, հայկական տարբեր գաղութներում, այլ արհեստաւորների թւում աչքի են ընկնում նաեւ սանթուր, քանոն, քեմանչա, թառ, ուղ, թամբուր, սազ եւ փողային ու հարկանային այլ նուազարաններ սարքող մի շարք վարպետներ։ Ուրիշ յարմար առիթի թողնելով դրանցից 19-20րդ դարերում ապրած վարպետներին վերաբերող տուեալների մէկտեղումը, այստեղ փոքր-ինչ կանգ առնենք թուրքիայում դարեր շարունակ նուազախմբային ազնուագոյն հնչողութեան մետաղեայ ծնծղաներ պատրաստած Զիլճեանների բարեհամբաւ տոհմի եւ նրա հոչակուած ներկայացուցիչների իննդիր վրայ։

Զիլճեանները, արուեստի վերածած իրենց արհեստով կ. Պոլսի երաժշտական կեանքում յայտնի են դառնում առնուազն 17րդ դարի սկզբներից։ Նոր ժամանակներում (19-20րդ դդ.) Զիլճեան տոհմի ներկայացուցիչները հասնում են համաշխարհային ճանաչման։ Նրանցից յատկապէս Քերովքէ վարպետի պատրաստած ծնծղաները երաժշտական գործիքների համաշխարհային ցուցահանդէսներում բազմիցս արժանանուր են մրցանակների, շանչանների եւ պատուողքերի։ Արդի տարբեր հրատարակութիւններում<sup>79</sup> Զիլճեանների ծնծղաները «թուրքական» են կոչում, ի հարկէ, շատ ու շատ պայմանականօրէն, որպէս թուրքիայում արտադրուած<sup>80</sup>։ Մինչդեռ, Մեծ եղեռնի օրերին՝ Զիլճեանները, մազապուրծ եղած թուրքական եաթաղանից, գաղթել են Միացեալ Նահանգներ, որտեղ նրանք (գերդաստանի արու զաւակները) մինչեւ օրս էլ նորտ-Կուինս քաղաքում (Մասաչուսետս), նախանձերի յաջողութեամբ շարունակում են իրենց հայրերի ու պապերի գործը<sup>81</sup>։

Ամփոփելով նշենք, որ ինչքան աւելի հարստացնենք մեր ընդհանուր եւ մասնաւոր գիտանքը երաժշտական գործիքագիտութեան ասպարէզում եւ մեր ազգային մշակոյթի ու մեղանում կենցաղավարած երաժշտական այլազան գործիքների մասին (օգտուելով Հնարաւոր բոլոր աղբիւրներից), այնքան աւելի խօսուն կը դառնան նաեւ հայկական միջնադարեան ձեռագրերում հանդիպող նուազարանների

79. Մինչեւ իսկ Խորհրդային երաժշտական հանրագիտարանում։ Տե՛ս Երաժշտական Հանրագիտարան, համ. 5, Սոսկուա, 1981, էջ 442 (ռուսերին)։

80. Բայց սեղուկեան արշաւանքներից առաջ, եւ Քրիստոսի թուականութիւնից էլ շատ առաջ Հայաստանում զարգացած մետաղագրութիւն է եղել Միջնադարեան ձեռագրերում հանդիպում են փոքր ու մեծ զանազան ծնծղաներ։ «Ծնծղայ» խօսքը ասորական սեսելա-ի միջոցով Ն. Ք. անցել է Հայերնին։ Կենտ ծնծղան՝ «քլոց» անուամբ կիրառուել է տակասին հեթանոս տաշարներում։ Իսկ Կարմիր բլուրուում գտնուած մի զորդ բրոնզէ ծնծղաները (ինչպէս եւ ասուրա-բարելական հնագոյն ծնծղաները) վերաբերում են Ն. Ք. Դրդ դարին։

81. Տե՛ս Ն. Տէ՛մ-Միջնադարի լեզվական անթիւժական անթիւժական, Անթիւժական, 1970, էջ 129։

պատկերները։ Նկատենք նաեւ, որ գիտանքի անհրաժեշտ մի աղբիւր էլ՝ արեւելեան եւ արեւմտեան միջնադարեան պատկերազարդ ձեռագրերի ու դրանց վերաբերող գիտական գրականութեան ծանօթութիւնն է։ Հայկական միջնադարեան ձեռագրերի պատկերազարդումները (որոնցում յատկապէս 12-13րդ դարերից ներառնուել են նաեւ ժամանակին կենցաղավարած նուագարանների պատկերները), իրենց նիւթով կապուած են հին կտակարանի եւ նոր կտակարանի բովանդակութեանը, ազգային զարդարուեստի ու նրա միջոցով՝ դիցարանութեան եւ առասպելաբանութեան իրականութիւններին, հայկական կիլիկիայի, կենտրոնական Հայաստանի եւ նրա արեւելեան ու արեւմտեան շրջանների աւանդութիւններին, հայկական գաղութներին յատուկ մշակութային յարաբերութիւններին, պատմական, գեղարուեստական, գիտական ու ծիսական գրականութեան, այլեւ աղթաքին, եւ առհասարակ աշխարհիկ կեանքին ու եկեղեցական հասկացութիւններին։

Ուրիշ խօսքով՝ նուագարանների պատկերները միջնադարեան ձեռագրերում բերուած են բազմապիսի կապակցութիւնների մէջ, որոնք անհրաժեշտ է հասկանալ, նախ քան երաժշտա-գործիքագիտական դատողութիւններին անցնելը։ Ի վերջոյ, սակայն, նեղ մասնագիտական առումով, մանրանկարներից քաղուող տեղեկութիւնները խմբաւորուում են հետեւեալ կէտերի չուրջ։ Մանկական նուագարանները<sup>82</sup>. գիւղական եւ քաղաքային բնակչութեան (աշխատաւոր մարդկանց) շրջանակներում օգտագործուած ժողովրդական նուագարանները<sup>83</sup>. ժողովրդային/գուսանական թատերական երաժշտներ եւ նուագուրդներ, քաղաքային մասնագիտ-երաժշտ գուսաններ եւ համապատասխան նուագարաններ ու նուագուրդներ։ սովորեցնող վարածու նուագածուներ։ ծէսի եւ արարողութեան հետ կապուած առանձին նուագարաններ։ եւ վերապէս՝ նուագախմբեր (ռազմական, շքերթերի եւ ուրիշ առիթներով հնչող եւ այլն)։

Այն էլ ասենք, որ միջնադարեան նուագախմբերը հաստատուն կազմ չեն ունեցել (ոչ հազուադէպ այն չեն ունեցել նաեւ նուագուրդները), եւ առհասարակ, նայած հանգամանքներին, աչքի են ընկել թէ՝ նուագարանների բազմազանութեամբ<sup>84</sup>, եւ թէ ընդամէնը երեք կամ

82. Սա մշակութային մի ենթաշերտ է, որում շարունակում են կենցաղավարել հնագոյն նախական նուագարաններ, եւ կամ նորերի պարզեցուած ու փոքրացուած տեսակները։ Ձեռագրերում զրանց պատկերները հազուադէպ են պատահում, բայց պատահում են եւ պէտք է տարրեցել։

83. Արանք պատկերուած են լինուած թէ՝ առանձին կատարողների ձեռքին, եւ թէ որպէս փոքրաթիւ, բայց շատ ինքնատիպ նուագուրդների (առանձիւնների) բարկացուցիչներ։

84. Այնպէս, որ մէկսեղուել են այժմ մեզ համար անհամատեղելի թուացող լարային, փողային ու հարկանային գործիքներ, ծնծղաներ եւ այլն։ Նաեւ զրանով է բացա-

չորս տեսակի նուագարանների տիրապետող երաժիշտների միաւորումով՝ մինչեւ վեցական, եօթական եւ աւելի հոգի<sup>85</sup>: Վերջապէս, այս բոլորին պէտք է աւելացնել, որ թւում է, թէ մեր միջնադարեան մատենագիրների մտապատկերներում մնացել են նաեւ՝ հին Հայաստանում կենցաղավարած ճայնային-գործիքային կատարողական մեծ կազմերի մասին յիշատակները: Դա յուշող ձեռագրական նիւթերից են, օրինակ, «Հանդէս բանաստեղծաց» կոչուող գրուածքների այն տեղիները, որոնք ներշնչուած են, կարծես, աշխարհիկ ու հոգեւոր մեծահանդէս տօների գեռեւս վար պատկերներից, այսպէս: «Երգք, պարք, երաժիշտք, գեղգեղօղք, նուագք, տաղք... նուագարանք՝ փող, քնար, ջնար, սրինգ, մրմունջք... հնչմունք, ցուցք» եւ՝ «կացուրդ, տափող... աւրհնութինք, սրբասացութիւնք, երգեցիկք, երգածայնք, փառաբանութիւնք, գովութիւն...»<sup>86</sup>:

Զենք կասկածում, որ յետագայում յայտնաբերուելիք նոր նիւթերը կը գան հաստատելու ասուածը, այլեւ աւելի պայծառ լոյս սրփութու ողջ նախընթացի վրայ:

## Ն. ԹԱՀՄԻԶԵԱՆ

արդուում, թէ ինչո՞ւ ձեռագրերում կարծես խառն եւ կամ առանց որեւէ կարգի են յիշատակւում նուագարանները, ինչպէս՝ «փող», «սրինկ», «քնար», «տափիղ» (տե՛ս Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թ. 1187, էջ 321բ-322ա-բ): Այդպէս, Վարդան Այգելցին էլ, իր «Ճառ վեցերորդ, վասն շնութեան» քարոզում գրում է: «Ճենայն երգարանն քաղցրածայն՝ զփողս եւ զջնարս, զտանաղիս եւ զծնծայս, զթմրուկս եւ զքնարս եւ զայլս...» (Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թ. 8356, էջ 64բ):

85. Այդ մասին մի գաղափար կարելի է կազմել հետեւեալ հրատարակութիւնից. P. TUĞLACI, *Turkish Bands of Past and Present*, Istanbul, 1986. Այստեղ խօսում է նաեւ Զիլճեանների եւ ուրիշ Հայ երաժիշտուների մասին: Միայն պէտք է նկատի առնել, որ օսմաննեան ուազմական փողային նուագախմբերում երաժիշտների թիւը մի առաւելագոյն քանակ է ներկայացնում:
86. Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թ. 3488, էջ 107ա:

## Summary

### MATERIALS FOR A SCHOLARLY STUDY OF THE MUSICAL INSTRUMENTS OF ANCIENT AND MEDIEVAL ARMENIA

NIKOGHOS TAHMIZIAN

The Armenian people over the millenniums has created his own rich musical culture, innumerable inspiring folk songs (rural, urban), and vivid instrumental tunes, a professional monophonic vocal-instrumental art of *vipasans*, *gousans* and *ashoughs* (bards and minstrels), and also solid traditions of instrumental solo, duet, ensemble and orchestral playing, with considerable elements of extemporising, long-held pedal points, heterophony, and simultaneous use of different rhythms.

Hence, Armenians have evolved a great variety of musical instruments, partly inherited from the Indo-European protoculture (which developed, as is stated in modern research works on Indo-European language and Indo-Europeans, on a land, that geographically in the main coincides with the Armenian Plateau), partly made by themselves, and, as is the case with all other peoples too, partly borrowed from foreign countries, and, if need were, modified, in accordance with the modal peculiarities of their national music.

On the whole, those instruments range from the most archaic specimens, made of stone, or wood, animal's bone, or horn, to elaborate samples of all four classes — idiophones, membranophones, aerophones, and chordophones, with large possibilities of performance, and great expressive potentialities.

Though instrumental music in Armenia too had its specific path of evolution, the instruments used by the Armenians, in general, developed alongside of the flourishing of the Armenian music itself.

The Armenian instrument-makers, the above mentioned *vipasans*, *gousans*, and *ashoughs*, who were poets and *melodes*, singers and performers-instrumentalists (all in one), on the one hand, always were in search of new means of expression, and, accordingly, improved the most important of the existing instruments, on the other hand, perfected instruments, and developed technique of playing them, in their turn influenced the musical culture taken as a whole.

Thus, the musical instruments, especially used in the prospering Armenian medieval towns by highly skilled performers, along with the entire national and World monophonic art (Eastern and Western, folk and professional, sacred and secular), reached their pick of enrichment and development with a striking deepening of the emotional content of music itself and perfecting of compositional structure, in Central Armenia and in the Armenian Kingdom of Cilicia, in the 12-13th centuries A.D.

At this time Central Armenia and the Armenian Kingdom of Cilicia in the province of instrumental music too brilliantly accomplished one of their important missions, intended for them in the history of World civilization — to be unique between East and West.

Here a very large number of old and new various instruments sounded in everyday life and on festivals, in the houses of humble workers and in the palaces of rich men, on the funerals and merry-makings, in the churches and theatres, in the streets and at the court; here were combined (especially in the towns), Eastern and Western elements of musical thinking and music, of musical instruments and methods of building them, on the basis of age-old national traditions; and from here too were carried westward some rare samples of the immediate ancestors of the European violin and harpsichord, lute and clavichord and others.

The latter was done by travellers engaged in international trade along three main routes, conjoining East and West, on which were laying large, blooming Armenian medieval towns. Dvin, Ani, Kars, Karin, Ardsn and Yerznka were on the main northern route through Central Armenia; Artjesh, Manazkert, Khlat and Nprkert — on the southern route, and Sis, Tarson, Adana, Mamestia and Ayas — on the route through Cilicia.

In those centers, the flourishing of trade, scientific and higher educational institutions, the laxing of the ideological atmosphere and the intensification of secular thinking, the increase in the circulation of money, raising of the standard of living and refinement of tastes — all emphasized the value and the role of fine arts and literature, especially vocal and instrumental music in public life.

It is noteworthy that authors of the 10-15th centuries, assign an important place in their writings to the description of musical instruments and their performance. Grigor Na-rekatsi (10th cent.) spoke about «Jutak» (fiddle), Hovhannes Sarkavag (11-12th cent.) mentioned a three-stringed lute, the tuning of which represented the ratios of «3:4 and 4:6», that is, if we consider the Contra C for fundamental — G-c-g. Hovhannes Yerznakatsi (13th cent.) made serious comments on the four-stringed lute (Armenian ud), which, as we showed it, had a tuning in fourths (G-c-f-b flat); Grigor Tatevatsi (14th cent.) mentioned the cane-pipe with five finger-holes; Arakel Syunetsi (15th cent.) spoke about the eight-stringed lute and proposed a very original classification of wind, stringed and percussion instruments. Hakob Ghrimentsi (15th cent.) gave a detailed description of skilled performance on the 40-stringed «sandir» (santur, dulcimer, obviously with courses of 1 and 2 strings), 70-stringed «ghanon» (kanon, with courses of 2 and 3 strings) and 100-stringed «arghanon» (with courses of 3 strings). There was also a «pandir» with a tuning, again, as we cleared it, of the type c-f-g-c<sup>2</sup>, and other instruments of larger range, with a tuning of the type g-d'-g'-d<sup>2</sup>, etc.

Nor were medieval miniaturists behind the times and commencing with the 12-13th centuries, quite happily decorated the pages of even liturgical manuscripts with musicians playing various types of ancient and new instruments: wooden castanets and cymbals (called «ts'ntsgha», small, put on the fingers, and big, worn on the hands), military kettle-drum («gos»), tambourine («dap», with a narrow frame and a leathern membrane, and with or without jingling small cymbals), other one-and two-headed drums of different shape and size («tmbuk», «dhol», «nagara», «diplipito»), bagpipe («parkapzuk» with two melody tubes), immense reed horn («avagapogh», used for purposes of signalling), end-blown whistle-flute («tutak»), shepherd's flutes («sring», «blul»), cowhorn or ram's horn or goat's horn («yeghjerapogh»), various reed-pipes with tubes of cylindrical or conical bores (among them — «duduk» and «syrrna»), small military copper horn («pghindze pogh»), circular horn («galarapogh») and long trumpet («shepor»), different types of lutes with short or long necks (among them — «ud», «sazz», «tanbur»), harp («tavigh») and lyre («knar»), multistringed instruments psaltery («saghmosaran»), zither («kanon») and dulcimer («santur»), bowed instruments «kyamani», «kyamancha», etc., etc.

In the late Middle Ages Armenian instrumental music reached a turning point. Several ancient instruments fell into disuse, others were used in the remote villages. New instruments were made on the basis of old models. The latter, in the main, preserved their shapes, structural peculiarities and tuning. Partly was preserved also the old repertory of instrumental and vocal-instrumental music. There appeared a new class of talented instrumentalists, called «sazandars», who knew and performed not only their own national tunes, but also almost all of the notable pieces of the Near Eastern urban professional music (Iranian, Arabic, Turkish).

They were incomparable in creative revising old works of the classic period of Eastern music, according to their national taste and to the taste of late Middle Ages, which (the latter), especially after the fall of Constantinople, emphasized some specific features of orientalism in the entire Near East.

In new times, from the beginning of the second half of the 19th century, European musical instruments were spread in the Armenian urban life. Recently in Armenia emerged also the 5th class of musical instruments — the electrophones.

Nevertheless, professional musicians and music lovers in Armenian are still cultivating a considerable number of medieval musical instruments, and true interest in their study too is increasing day after day.

Historical, archaeological, manuscript and other data enable us to confirm the fact, that Armenia had a great wealth of musical instruments, and accordingly, of instrumental music in ancient times and Middle Ages, worthy of a thorough study on European level. And the purpose of the author of this article was to accomplish a scrupulous examination of all the available today data, develop our source criticism, summarise our achievements in this field, and point out and classify the main questions requiring basic elucidation.

